2

ՎԱՐՔ

ՍՐԲՈՅՆ ԳԷՈՐԳԱՅ

ՋՕՐԱՎԱՐԻՆ



Գրադ
949

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1849

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՈՒՆԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ



ԱՌ ԱԿՆԱՐԿՈՂՔ ՄԱՏԵՆԿԱՆՍ

Զ՝ՄԵԾԻ նահատակին Պատրաց կամեցեալ՝ի լոյս ընծայել զվկայաբանութիւն, ընդ երկասիրութիւնս քաջաց նախնեաց՝ յաւելաք և զյետնոց ոմանց, ոչ ըստ արժանեաց բանահիւսութեան, այլ առ՝ի բովանդակելոյ՝ի մի տուփ զհամբրէն որ՝ի ձեռս մեր էին՝ի սուրբն Պէտրգիոս բանք արձակ կամ՝ չափաւ. սակայն և յայնցանէ զյոյժ հետևական կամ՝ զյայտնիս՝ի բաց թողաք։

Լրկաքանչիւր և վարուցն հրատարակելոց էին առ մեզ կրկին օրինակք գրեալք՝ի սկիզբն կոյս ԺԳ դարու այլ և այլ թարգմանութեամբ. որ զի՝ի բազումն զուգաձայն ընթանային, աւելորդ վարկաք առանձին և զերկրորդն տալ՝ի տպագրութիւն, այն զի և թերակատարք գտանէին գաղափարքն, շատ համարեալ զմեծ ինչ տարաձայնութիւն նշանակել՝ի ներբոյ։ Իսկ զքանչելեացն պատմութիւն, որոյ մի և էթ կայր առ մեզ օրինակ հին, թէպէտ և թերի, այլ զի մեծի առն էր վաստակ Ս՝կայսերին մերոյ Պորիգորի, ոչ խղճեցաք կիսակատար և զայն ընծայեցուցանել. զլրումն պատմութեանն թողլով ինդրողաց գտանել՝ի Հայաստուրս, և՝ի Ս՝արս սրբոց, ուր լիցին քննութիւնք և զնորալուր աքանչելեաց ինչ զոր ընթեռնումք՝ի վարս սրբոյս։

ԱՌ

ԱՍՏՈՒԱԾԱՊԱՏԻՒ

ՀԱՅՐ ՄԵՐ ԵՒ ՏԷՐ

ԳԷՈՐԳԻ ՀԻՒՐՄԻՋԼԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՒՆԵԱՑ

ԵՒ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱԲԲԱՅ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՍ

ԳԱՒՈՒՐ

ԵՐԿՆԱԲԱՀԽԻԿ ԾՂՆԴՈՅ ԻՒՐՈՅ

Ի ԻՒ ԱՄՍԵԱՆ ՍԱՀՄԻ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի դուռն արքոյն դազարու.

ՌՄԴԸ

ՈՒԳԼԵՐԶ

ԵՐԵՒ ՏԻՐՈՒՀԻ ՀԱՅՐԱՊԵՏ

Օ՜ երկնաւորին քո կենցաղ հուշակապած Պաշտպանի
Օ՜եղեալն ի քէն կէտ գիտման քան թէ զանուն ընտանի,
Ի նախնական հարց երկոց նրբերելով խայրի նոր
Ի գրաւական ընծայեմք քան ի խրախոյս վի յորդոր՝
Թէ հոմանուանդ զուգիս քաջ համաշաւեղդ յասպարէզ,
Լոսին սիրով անարիւն դու ՀԵՌՆԵՐեալ յողջակէզ,
Ոչ ժանեւորն առեղն շրջաբերեալ ընդ հոլով՝
Ա՛յլ յանհաւրոյր ի գեղց ժամանակիս վերչոյլով.
Սակայն քոյդ Վեզ ԳԵՈՐԳԷ՝ մաղթեմք, եւ կայ օգնական
Լոգերկարել անընկուն ըղձանդիսիդ սուրբ շրջան,
Օ՜ի վայելմամբ յերկնաձիր մեր ի յարհնիսդ հայրագովթ
Լսխատրպիդ Վեր աՀեն եւ Վեզ մաք փառք անկապուտ։

ՈՐԴԻՔ ՔՈ

ԱՆՁՆԱՆՈՒԻՐՔ ԽՈՆԱՐՀԱԲԱՐ

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ԳԻՆՈՐԴԵԱՅ ՉՕՐԱՎԱՐԻՆ

Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի թաւ գաւորութեանն ոչ սկիզբն աւուրց է և ոչ վախճան ժամանակաց ունի. իսկ փառաւորեալ ծննդեանն 'ի մարդանալոյն 'ի Մարիամայ Աստուածածին կուսէն, որ յայտնեալ երևեցաւ ամենայն տիեզերաց՝ 'ի ձեռն սուրբ առաքելոյն Ճշմարիտ քարոզութեանն, որք արժանաւոր գտան վիճակի սրբոյն և Հնորհաց Ճշմարիտ հաւատոյն[1]: Իսկ բազումք զՃշմարտութիւն հաւատոյն անհաւատալի համարին, որք մոլորութեանն ծառայք են. զոր ըմբռնեալ է մնափառութիւն աշխարհիս այսորիկ, և շաղփաղփանս համարին զանտեսութիւն[2]

1 Բ. Շնորհաց սուրբ հոգւոյն . . . զՃշմարտութիւնն անհաւատս համարէին:

2 Բ. Զանտեսութեան խորհուրդ:

տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ է արդարև Հրեից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն. այլ Աստուած կամեցաւ ծառայից իւրոց ամենեցուն միաւորել 'ի փրկութիւն Հնամարիտ աստուածպաշտութեան։

Որ եղև 'ի ժամանակին յայնմիկ սաստիկ կռապաշտութիւն Դիոկղիտիանոսի Հռոմայեցւոց աշխարհին', ժանդ ոմն և գազանաբարոյ լեալ ընդդէմ քրիստոսական հաւատոյն, և յաղթեալ յոյժ 'ի մոլորութենէ մնոտի կռոցն խաբէութեան, ունելով սիրելի զոմն միախորհուրդ յանաստուածութեանն, որոյ անուն է Մանգնենտիոս, երկրորդ թագաւորութեան նորա. և մոլեգներ 'ի վերայ քրիստոնէից զայրագնեալ կռոցն համբարշտութեամբ։ Այս սոցա խորհուրդ ժպրհութեան արարեալ ընդ միմեանս, բառնալ ամենևին զքրիստոնէից պաշտօնն. և բռնադատէին զամենեսեան պաշտել զկռոցն պատկերս։ Վանդի էր 'ի ծննդէնէ իւրմէ սպականեալ 'ի կռոցն մոլորութիւնս, և մանաւանդ 'ի պատկերն Աստղենի. և նստեալ 'ի միասին խորհել ընդ միմեանս գրել հրովարտակ յերեսաց թագաւորին այսպէս.

«Դիոկղիտիանոս թագաւոր[2] ընդ ամենայն իշխանութիւնս և աշխարհս մեր, իշխանաց և զօրավարաց և ամենայն որ ընդ ձեռամբ մերով իցէք, ընդ ամենայն աշխարհս Հռովմայեցւոց, դատաւորաց և ամենայն պետաց իշխանութեանց խնդալ։

1 Բ. Ի ժամանակին յայնմիկ 'ի թագաւորութեան Դիոկղիտիանոսի Հռովմայեցւոց աշխարհին, որ 'ի հեթանոսական կռապաշտութեան մոլեալ էր առաւել քան զառաւել, ժանդ և գազանաբարոյ լեալ, և այլն։

2 Բ. Դիոկղիտիանոս միշտ պատուեալ յաւիտենական և մեծ թագաւոր, ընդ ամենայն աշխարհս Հռովմայեցւոց զօրավարաց, դատաւորաց, պետաց։

Ա՝ման զի համբաւ ընթացաւ յաստուածեղէն լեռիս մեր, և անչափ խռովեցուցին զմեզ, զի հերձուածք ամբարշտութեան քրիստոնէից զօրանայ, զի զոր ծնաւ Ա՝արիամ՝կին ոմն Հրեայ՝ զնա անուանեն Յիսուս, իբրև աստուածոյ երկիր պագանեն։ Իսկ զ՝Յոյզոն զմեծն աստուած, և զ՝Յրսին, և զ՝Ովսեփոս, և զ՝Յրակլէս, և զ՝Ովսայ, յորոց ձեռն աշխարհի մերոյ խաղաղութիւն պարգևի, թշնամանեն և հայհոյեն։ Իսկ զանուանեալն Ք՝Ռիստոս, իբրև զաստուած պատուեն, զոր Հրեայքն որպէս զմահապարտ և զմոգ՝ խաչեցին։ Ա՝ման այսորիկ հրամայեմք. զամենայն քրիստոնեայս՝ ուր և գտցին՝ զարս և զկանայս ըստ ամենայն քաղաքաց և գաւառաց 'ի խոշտանգանս դառն՝ արկանել, զի զոհեսցեն աստուածոցն մերոց, և ուրացին զմոլորութիւնն զայն։ Իսկ որ հաւանին, արժանի առնել թողութեան. սակայն եթէ ոչ՝ դժոգակ մահու արոյ և հրոյ մատնել զնոսա, զի գիտացեն եթէ անփոփոխելի են հրամանք մեր, և եթէ ոք մերոց աստուածեղէն հրամանացս հեղգասցի՝ զվնիռ նոցին ընկալցի ։։։

Յ՝ Իբրև այսպիսի գիր և հրաման եդան ընդ ամենայն տեղիս, մեծ հալածումն յարուցին 'ի վերայ հօտին Ք՝ռիստոսի, որպէս զի բազումք 'ի նշանաւոր մարդկանէ 'ի սաստիկ տանջանացն թուլացեալք, և առաւել ևս մոլեգնեալ Ովսեփոսիանոսի, կոչեալ առ ինքն զամենայն ազգքունի հրապարակն հանդերձ զօրօքն՝ դարձեալ խորհուրդ ազարեալ, զի զամենայն ազգս քրիստոնէից աստակեսցէ. և ոչ առաջի կային թագաւորին՝ հանդերձ երկիւղիս, իրաւունք ² գործել խորհէին։ Իսկ Ովսեփոսիանոս հրապարակախօս եղեալ ասէր. ։։Ինձ այսպէս թուի, սիրելիք իմ՝, եթէ չիք այլ ինչ պատուական, որպէս թէ զառ աստուածն մեր զպաշտօնն

1 Բ. Դառինս։

2 Բ. Իրաւանքք։

կատարել. վասն զի 'ի ձեռն նոցա մեզ թագաւորութիւն, և ամենայն մարդկան փրկութիւն պարգևի. վասն որոյ յիրաւի համարիմ այսուհետև աստուածոյն մերոց հանապազորդ զզօն մատուցանել։ Իսկ եթէ գոյին քրիստոնեայք թշնամանողք աստուածոյն մերոց, ամենայն հնարիւք 'ի տանջանս արկանել. մինչև նոցա դժնդակ կրօնքն լուծցին, և յիշատակ նոցա 'ի ձեռն մահու կորիցէ։։։ Լուաւ այն միաբան պատասխանի ետուն թագաւորին, և ասեն. "Մեք յօժարութեամբ ընդունիմք զմեծ թագաւորութեան ձերոյ զաստուածանման հրամանդ և զնամանդ, և կամիմք պատուել զանմահ աստուածն մեր, որպէս և զձեր զօրութիւնդ. արդ այսուհետև եթէ գոյի ոք, որ լոկ 'ի միտս իւր անուանեսցէ զՔրիստոս, ամենևին 'ի մահ մատնեսցին։։։ Արդ զայս ամպարշտութեան և զանիրաւութեան խորհուրդս խորհեցաւ բռնաւորն 'ի հրապարակին։ Հրաման թագաւորին առաջի եդեալ՝ ոչք գտանէին քրիստոնեայք՝ բազում թշնամիք գուշակէին թագաւորին, զի տանջեսցեն խոշտանգանօք։

Յայնժամ ծագեաց որպէս 'ի խաւարային գիշերի աստղ լուսաւոր և մեծապայծառ՝ որ Քրիստոսի պատուական մարգարէն էր Գեորգիոս անուն Քրիստոսի զօրական, փարատել զմէգ և զմառախուղ բազմաստուածութեանն, և զմոլորութիւն կռոցն մատուեաց, երկնային խորհրդովն կատարեալ, և փրկական քարոզութեամբն, զամենայն արժանաւորս 'ի ձեռն Ճգնութեան իւրոյ։ Քանզի արհամարհեաց զսպառնալիսն Դիոկղիտիանոսի պղծոյ, և զմոլորութիւն իշխանացն և զօրավարացն. և ոչ զառաջի եդեալսն զտանջանացն ամենևին ինչ փոյթ արարեալ. այլ հայեցեալ յամենեսեան՝ որք ահաւորքն կարծէին, աստուածասէր սրտիւ ասէր յինքեան. "Գեորգեա՝ ընդէ՞ր կաս դատարկս. ահա տեր կարդայ 'ի հարանիս նորա մտանել, առագաստն բացեալ է, ընթրիքն պատրաստեալ էն, ընդէ՞ր

յամենս. մուտ յառաջ քան զփակել դրանն, քանզի մերձ առ մեզ է Քրիստոս. որ վասն մեր խաչի համբերեաց, աղաղակէ և ասէ. Մի երկնչիք յայնցանէ՝ որ սպանանէն զմարմինն, և զոգին ոչ կարէն սպանանել։ Յիշեա Պետրոս զաւետարանական վարդապետութիւնն և զտերունական զանսուտ աւետիսն՝ զոր ասաց. Լութ որ խոստովանեացի յիս առաջի մարդկան՝ խոստովանեցայց և ես զնա առաջի հօր իմոյ՝ որ յերկինս է։ Մի հայիր՝ Պետրոս զառժամանակեայ զանցաւոր աշխարհս, որ է ստուեր երկնային կենաց. և մի զընդունայն փառս աշխարհիս առ երկնային յուսոյն. զի ամենայն փառք մարդոյ իբրև ծծաղիկ խոտոյ են. սակաւիկ մի համբերեա, և ընդ հրեշտակսն յաւիտենական կեանսն դասիս։։։ Զայս առ ինքեան խօսեցաւ. փոքր՝ ի շատէ սուրեալ զձայն նորա, և այսպիսի բարի խրատու հաստատել զխորհուրդսն, ոչ միայն չերկեաւ՝ ի բռնաւորացն սպառնալեաց, այլ և զՀնմարտութեան բանս գործովք քարոզէր, և զառաջիկայ տանջանաբանացն բազմութեամբ ծաղր արարեալ, մեծապէս վարդապետութիւն հանդերձ ՀԳնութեամբ՝ սուրբ եկեղեցեաց Աստուծոյ Թողոյր յիշատակս գեղեցիկս։

Լս էր սուրբ վկայն Քրիստոսի յազգէն Պամբաց՝ ՝ի տոհմէ ազատ և մեծատուն յոյժ, և աստուածեղէն իմաստութեամբ զարդարեալ, և բազում անգամ զտերունական իշխանութիւնն[2] վարեալ Երևելի պատուով, ՝ի գնդէ որում անուն էր Անիկորն[3]։ Լս այնուհետև վասն բազում քաջութեան իւրոյ զկամութեանն պատիւ տուեալ նմա ՝ի Թագաւորաց։ Իբրև տեսեալ նորա զանչափ մեղրութիւնն՝ որ ընդդէմ Քրիստոսի գործէին, յայնցանէ՝ որ կռոցն պաշտօնեայքն էին,

1 Բ. Մի համարիր։
2 Բ. ԶՏրիբունական իշխանութիւն պատուեալ։
3 Բ. Անիկրիոն։

վաղվաղակի զինչս և զստացուածս իւր բաշխեաց և եւ աղքատաց և տնանկաց, և որպէս Ճգնաւոր մերկացաւ զամենայն։ Յօժարութեամբ 'ի մէջ թագաւորական ատենին և արքունի հրապարակին, և ամենայն զօրաւարաց՝ որք նստէին յատենին, և այլ իշխանաց՝ որք կային առաջի թագաւորին, աղաղակեաց մեծաձայն և ասէ. "Ես քրիստոնեայ եմ, թագաւոր. վասն որոյ խոսեցաւ 'Ճշմարիտ և երկնաւորն Աստուած և թագաւորն մեր Յիսուս Քրիստոս. և կամ 'ի միջի ձերում զարմացեալ ընդ այդչափ մոլորութիւնդ ձեր՝ որ վասն կռոցն ունիք. և ոչ ճանաչէք զմիայն կենդանին աստուած, և զարարիչն ամենայն արարածոց, որ և զթագաւորութիւնդ իակ ետ ձեզ։ Աստ ոչ թագաւոր, և ամենայն աթոռակիցդ, մի մոլորիք 'ի պատրանաց դիւաց. քանզի աստուածք՝ որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն։

Իսկ քրիստոնեայքս միայն Աստուծոյ Հօր երկիր պագանեն, և միայնոյ տեառն Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ, որով ամենայն եղև, և մի Հոգի սուրբ Աստուծոյ, Լրջորդութիւն կատարեալ'ի միում աստուածութեան և թագաւորութեան, որով աստ կեամք բարեպաշտութեամբ, և յետ վաղճանելոյն ակն ունիմք կենացն յաւիտենից։

Բայց ձեր պաշտամունքդ ստուգութեամբ արժանի էն այպանելոյ, քանզի բարբանջմունքդ դիւաց են, և չիք ինչ 'ի դա Ճշմարտութիւն, զի գործք ստամանայի են, որք ընկղմեն զերկրպագուս իւրեանց 'ի ստակուն և 'ի կորուստ։։։

Յայնժամ հայեցաւ 'ի նա Անտինոեանոսն՝ որ էր երկրորդ թագաւորին և սիրելի. և ասէ ցսուրբն. Ո՞ր ինչ անուն է քո, և կամ ո՞ւ ես դու, որ այսչափ յանդ

1 Բ. Ես քրիստոնեայ եմ, թագաւոր, և խրախուսեցի 'ի Ճշմարիտ և յերկնաւոր և այլն։

դրկնութիւն ունիս։ Սուրբն Գէորգիոս պատասխանի
եւ ասէ. «Կամ եւ առաջին անուն իմ քրիստոնեայ է.
բայց ի մարդկանէ Գէորգիոս կոչիմ։ Հայեցեալ ի նա
թագաւորին Դիոկղետիանոսի՝ անդրնդային վիշապն,
ասէ ցնա. Գէորգիոս, ուսեալ է մեր վասն քո՝ եթէ
յանմատութեան և ի քաջութեան ընտիր ես հանապազ,
և պատուի արժանի լեալ ես յարքունական խնամոց
մերոց։ Ապա որոյ մատուցեալ զոհեա աստուածոց, զի
մի չարաչար կորիցես, այլ մանաւանդ վայելեսցես ի սէր
մեր պատուով, և առաւել ես մեծութեամբ ի ձեռն
մերոյ խնամածութեան[1], և առ մեզ համարձակութիւն
ունելով. այլայդ ընդունայն համարձակութիւնդ քո չէ
ինչ քեզ յօգուտ։

Սուրբն Գէորգիոս ասէ. «Արանի թագաւոր, թէ
ասիցիս դու ինձ, և ճանաչիցիս զմիայն ճշմարիտն Աս-
տուած, զի և երկնից աբքայութեանն արժանաւոր լի-
նիցիս. բայց արդ իշխանութիւնդ քո առժամանակեայ
է, և խոստմունքդ քո և ողբանքդ անզօրք էն շարժել
զիս ի բարեպաշտութենէն Աստուծոյ իմոյ. պատիւ քո
քեզ լիցի, և խոստմունքդ քո՝ որ քեզ հաւանին. բայց
ես զԱրիստոս ունիմ զերկնաւոր թագաւորն՝ որ տայ
ինձ զիրաւս և զյաղթութիւն հակառակորդին և պաշ-
տօնէից նորա[2]։ Դու սրտմտեալ թագաւորն հրամայեաց
կախել զնա զփայտէ, և գեղարդեամբ հարկանել զնա[2],
և ընկենուլ զնա ի գետնի։ Դու իբրև զայն արարին,
ցայտեաց արիւն զմարմնոյ նորա, բայց գեղարդն իբրև
զանագ ծալեցաւ յետս։ Յայնժամ ասէ սուրբն Գէոր-
գիոս. Զոհանամ զքէն Քրիստոս, զի զսուրբ պաշ-
տօնէից սատանայի յետս դարձուցեր մինչև ի սպառ,
և զսրտմտութիւն բռնաւորիս որ ի վերայ իմ՝ քա-
կեցեր։

1 Բ. Մերոց խնամոց աստուածութեան։
2 Բ. Զչրոնայն նորա։

Լա լցեալ բարկութեամբ Պիսկիտիանոս , հրամայեաց իջուցանել՝ի փայտէն և տանել՝ի բանդ , զոտս նորա չարաչար պնդել՝ի կոճիղ , և դնել քար մի մեծ՝ի վերայ կրծոց նորա , որպէս զի չորից արանց աշխատութեամբ բառնալ զքարն . և իբրև եդին զքարն՝ի վերայ կրծից նորա , ՝ի ձայն մեծ աղաղակեաց սուրբն Պետրոս , և ասէ . Պոհանամ զքէն Աստուած բարձրեալ , զի արժանաւորեցայ բեռինս ծանունս ունել՝ի վերայ սրտի իմոյ , որ հաստատէ՝ի քեզ զանսիպոխելի խոստովանութիւնս ։

Լա՝ի վաղիւ անդր արկանէ սատանայ՝ի սիրտ Պիսկոկ զիտիանոսի և որ ընդ նմա աթոռակիցքն , և հրամայեցին առնել անիւ մեծ բովանդակ ամենայն հնարիւք կազմել . և արարին զնիւթն՝ իբրև զհիւսնական մանուլս յամենայն կողմանց սրով կազմեալ , և հրամայեաց անօրէն բռնաւորն ածել յանիւն . և իբրև ածին զնա քարշելով՝ի տեղին , հայեցեալ նորա՝ի դժնդակ մեքենայն յայն , այնպէս կազմեալ յարուեստից սատանայի , հայեցեալ յայն՝ ասէ . Տեր Յիսուս Քրիստոս , զոհանամ զքէն որ կոչեցեր զիս՝ի վիճակս յայս . արդ դու որ՝ի մէջ երկուց աւազակացն խաչեցար և զմահ ճաշակեցեր , զի փրկեսցես՝ի մահուանէ զմարդն , տուր ինձ անվեհեր զխոստովանութիւն՝ի ժամուս յայսմիկ , և պահեա զոգիս իմ՝ի հնարից բանսարկուին ։ Լա զայս ասացեալ ընկեցաւ յանիւն , և չարաչար ըմբռնեալ կոտորեցաւ մարմին նորա ։

Լա տեսեալ թագաւորն հանդերձ Կանստանդինոսիւն, հանքարձ զձայն իւր և ասէր . Պիտացէք ամենեքեան զի ոչ գոյ այլ աստուած բայց Աստղն , և Պողիդոն , և Լրակլէս , և Դիա , և մեծն Արտեմիս [2] . արդ ուր է

1 Բ . Զանիւն ։

2 Բ . Աստղն և Երմէս և Արամասդ և Եփեստոս և Պիսիդոն և Երակլէս և Դիա մեծն Արտեմիս ։

աստուածն Գեորգեայ, ընդէր ոչ եկն և փրկեաց զնա 'ի ձեռաց իմոց։ Եւ հրամայեաց այնպէս Թագաւոր զնա 'ի տանջանարան անուին, և ինքն չոգաւ զի ճաշակեսցէ։ Իսկ 'ի տասներորդ ժամու եղև հնչիւն մեծ և ձայն յերկնից՝ որ ասէր. Դիաջերեաց Գեորգիոս, և լեր աներկիւղ. քանզի բազումք հաւատացեալ են քեզ։ Իսկ որք պահէին զնա դահիճքն՝ երկիւղիւ զարհուրեալ 'ի ձայնէ հնչմանն՝ փախեան։ Եւ հրեշտակ տեառն իջեալ 'ի բաց ելոյծ զնա 'ի տանջանարանէն յայն, և ողջանդամ հաստատեաց զմարմին նորա։ Ողջունեաց զնա և ասէ. Ուրախ լեր Գեորգիոս, և հաւատա 'ի զօրացուցիչն քո, և զընթացս քո կատարեա. քանզի աւասիկ մեք անսամք տալ քեզ զպսակն զկատարեալ խոստովանութեանն։ Եւ յարեաւ սուրբն Գեորգիոս ուրախութեամբ և գոհանալով զտեառնէ, և շրջեր սաղմոսելով. Բարձր առնեմ զքեզ աստուած իմ և թագաւոր իմ, և օրհնեմ զանուն քո յաւիտեան. և Ողիոլ արա զգնացս իմ տեր, և մի տիրեսցեն ինձ ամենայն անօրէնութիւնք։

Եւ եկեալ 'ի տեղի ինչ ուր կայր պատկերն Ապողոնի, և եգիտ անդ զթագաւորն և զԱ՝անջնենտիոսն, և զամենայն բարեկամն թագաւորին, զոհս և երկրպագութիւնս մատուցանելով կռոցն։ Եւ մերձ եղեալ Գեորգիոս աղաղակեաց ասելով. Ոչանիր զիս թագաւոր և առ յինէն զաւետարանեալն Աստուած [1], որ փրկեաց զիս 'ի ձեռաց քոց, և 'ի մահաբեր տանջանացն, զոր պատրաստեցեր ինձ 'ի կորուստ, կարծելով կորուսանել. քանզի մոլորեալ ես կռոցդ զոհ մատուցանելով։

Իսկ թագաւորն հայեցեալ 'ի նա ասէ. Ո՞վ ես դու։ Եւ ասէ սուրբն. Դա եմ Գեորգիոս, որ հրամանաւ քո պրկեցայ յանիւն. զոր և թողեր զիս յանիւն՝ կարծելով

1 Բ. Եւ ինձ զառ յինէն զաւետարանեալն։

մեռեալ։ և այժմ եկի ցուցանել քեզ՝ թէ կարող է Աստուածն իմ փրկել զիս 'ի մահուանէ, զոր դու կարծեցեր իբրև թշնամանել։ Յայնժամ Թագաւորն հրամայեաց ունել զնա և մերձ կացուցանել։ Հայեցեալ 'ի նա՝ ասէ. Լաւ է եթէ ստուեր բռնամահին է, և խաբէ զմեզ։ Իսկ Անտիոքոսն. Կրկին նորա է։ Այուրին Գեորգիոս ասէ. Այս եմ Գեորգիոս ծառայն Քրիստոսի. մի մոլորիք 'ի կուռս. այլ գիտասջիք եթէ կարող է Քրիստոս և 'ի մեռելոց յարուցանել զոր յուսան 'ի նա, և 'ի ձեռաց ձերոց փրկել։

Այս տեսին զնա և լուան 'ի նմանէ զայս Աստուծոյ և Պրոտոդիոն՝, ստրատելատը՝ որ կոչին զօրավարք, հաւատացին յԱստուած ամենայն ընտանեաւք իւրեանց, աղաղակէին և ասէին. Մեծ է Աստուած քրիստոնէից, և նա միայն է Աստուած, և չիք այլ ոք որ զայ Աստուած. բայց նա միայն է Աստուած օրհնեալ յաւիտեան։ Այս իբրև լուաւ զայս Թագաւորն՝ հրամայեաց զամենեսեան զնոսա արտաքոյ քաղաքին տանել յանապատ տեղիս և կոտորել զնոսա։ Այս իբրև երթային նոքա 'ի տեղի կոտորմանն, միաբան աղաղակէին ասելով. Տեր Յիսուս Քրիստոս, ընկալ զոգիս մեր խաղաղութեամբ, և կարգեա 'ի քո անփոփոխելի յանանց արքայութիւնդ, համարելով մեզ զփոքր մի խոստովանութեանս մերոյ զառ 'ի քեզ հաւատս յարդարութիւն և 'ի թողութիւն մեղաց մերոց։ Այս այնպէս կատարեցաւ վկայութիւն նոցա 'ի Քրիստոս Յիսուս։

Յայնժամ լուեալ և Թագուհէն Աղեքսանդրեայ վասն սրբոյն Գեորգեայ՝ հաւատաց ինքն 'ի տէր, և եկեալ առ Թագաւորն համարձակութեամբ աղաղակեաց և ասէ. Այս քրիստոնեայ եմ, սրբոյն Աստուծոյ Գեորգեայ աղախին։ Այս զայս ասելով Թագուհէն, պատասխանի ետուն Անտիոքոսն և ասէ. Այս մեզ

1 Բ. Աստուծոյ և Պրոկոդիոն։

Թագուհի Աղեքսանդրիէ, ընդէր զԱրիստոս գովեցեր և զաստուածն արհամարհեցեր։ Իսկ նա ասէ. Աստուածդնին փառաբեալ զգական արհամարհեցի։ Այս զայս ասելով գնաց՝ ունելով զԱստուծոյ երկիւղն 'ի մտի, և զհաւատն անշարժ։ Իսկ Թագաւորն սրտմտեալ՝ հրամայեաց արկանել զսուրբն Գեորգիոս 'ի գուբ կրոյ. զոր 'ի նոյն ժամ ինքուցեալ և Թաղեալ 'ի կրի անդ զերիս տիւս և զերիս գիշերս. հրաման տուեալ պահապանացն զի պահեսցեն, զի մի ոք 'ի խորհրդեան լինիցի հանել զնա անտի։ Այս յետ երից աւուրց ասէ Թագաւորն. Այրթիցեն զօրականք և հանցեն զսակերս բրոնամահին, և զգուշութեամբ պահեսցեն, որպէս զի մի ոք գիտասցէ զնմանէ։ Իսկ գնացին զօրականք 'ի գուբ կրոյն, եկին և այրք բազումք 'ի տեսանել և իսկ 'ի բաց առին զկիրն, գտան սուրբ վկայն ոչ ինչ ունելով ամենևին ապատ 'ի մարմնի իւրում. քանզի հրեշտակ տեառն էր ընդ նմա, լինելով նմա օգնական 'ի հրամանէ Քրիստոսի։ Իսկ տեսին զնա ամենեքեան աղաղակեին ասելով. Մեծ է Աստուածն քրիստոնէից։ Այս լուեալ զայս Թագուհոյն Աղեքսանդրիայ՝ եկեալ և նա 'ի տեղին աղաղակելով. Մեծ է Աստուած որ 'ի քրիստոնեայս, և ոչ կոյ այլ բայց 'ի նմանէ։ Հաւատացին և զօրականքն՝ զոր առաքեցան 'ի Թագաւորէն հանել զնա 'ի գուբ կրոյն։

Այս իսկ լուաւ զայս Թագաւորն, հրամայեաց զօրացն երթալ և ունել զսուրբն և ածել առաջի իւր։ Իսկ ածին զսուրբն, նստուցեալ Թագաւորն յատենի հանդերձ մեծամեծօք իւրովք, և ասէ ցնա. Այսա մեզ ո՞ կենդանացոյց զքեզ։ Այսէ ցնա սուրբ վկայն. Այթէ լսէք զարձեալ՝ ոչ հաւատայք. բայց գիտա Թագաւոր զի Յիսուս Քրիստոս որդին Աստուծոյ պահէ զիս յամենայն տանջանաց քոց, և զամենեսեան՝ որ կարդան առ նա՝ փրկէ յորոգայթից սատանայի։ Յայն ժամ Թագաւորն հրամայեաց առնել կօշիկս երկաթիս,

որ ունէր բևեռս սուրս, ուղղդս, և շողացուցանել և առնուլ ունելեօք և ազուցանել սրբոյն և ընթացուցանել զնա։ Իսկ սուրբ վկայն ոչ կարելով զնալ յընթացսն, ասէ յինքեան. Ընթացիր Գեորգիայ 'ի Թողեալ քեզ վիճակն. և հանդերձ արտասուօք աղօթէր. Տէր Յստուած իմ փրկիչ նեղելոց, ապաւէն հալածելոց, համբերութիւն որք վասն անուանդ քո են չարչարեալ. մի Թողուր զիս, այլ շնորհեա ինձ համբերութիւն մինչև 'ի սպառ։ Այլ 'ի կատարել նմա զաղօթսն, եկն առ նա ձայն յերկնից որ ասէ. Քաջալերեա Գեորգիոս, զի ես ընդ քեզ եմ 'ի փրկել զքեզ. և նոյն ժամայն բժշկեցաւ մարմին նորա։ Այլ հրամայեաց Թագաւորն տանել 'ի բանդն, և վաղիւն ասէ ցնա Թագաւորն. Մինչև ցե՞րբ սրտապնդեալ կախարդութեամբդ՝ տանջանացդ ժուժկալես, և մանաւանդ իսկ մոգութեամբ 'ի դիւաց օգնականութենէ. հաւանեաց ինձ այսուհետև զոհեա աստուածոցն։

Իսկ սուրբն ասէ ցԹագաւորն, և որք ընդ նմայն էին. Այս ընդունելով զօգնականութիւնն Յստուծոյ իմոյ, զամենայն տանջանս ձեր ընդունելով, կացի առաջի ձեր ողջացեալ՝ վկայելով զօրութեան միայն Յստուծոյ. և պատրաստ եմ դարձեալ առ ամենայն տանջանս ձեր, վասն առ 'ի Քրիստոս հաւատոյն։ Իսկ դուք որպիսի՞ յոյս ունիք, որք անշնչոցն պիղծ կռոցն, որք ոչ ինչ են, յընդունայն պաշտէք, և կորստեանն նոցա հաղորդք լեալք. ամաչեցէք այսուհետև աստուածս անուանել զդոսա, որք գիջութեամբք և արբեցութեամբ և պատերազմաք և սպանութեամբ, առ սակաւ մի կացեալ են յաշխարհիս յայսմիկ, և յաւիտեան տանջին յանչէջ հուրն, որ կայ մնայ ամենեցուն որք պաշտեն զնոսա։

Այլ լուեալ զայս Թագաւորին և ամենայն արքունականքն, հրաման ետուն արջառաջոք յանխնայ զմարմին նորա հարկանել։ Այլ իբրև հարին զնա 'ի բազում ժամս, ասէ ցնա Թագաւորն. Մինչև յե՞րբ

թշուառական, ոչ հաւանիս և զՀես մեծ աստուածոյն, զի պատուի մեծի արժանի եղիցիս և կեցցես։ Իսկ սուրբն ասէ. Լա կենդանւոյն Աստուծոյ հանապազօր պատարագ օրհնութեան մատուցանեմ, որ փրկէ զիս 'ի ձեռաց ձերոց, և արժանի արասցէ փառաց և պատուի երկնաւորի։ Լրանի եթէ դուք ինձ հաւատայիք, և միայնոյ Աստուծոյ երկիր պագանէիք։

Յայնժամ հրաման եւ թագաւորն արկանել զնա 'ի բանդ, և ինքն գնաց յարքունիսն։ Լաւ իբրև եր սուրբն 'ի բանդին՝ ամենայն հաւատացեալքն գային առ նա 'ի գիշերի, տալով ինչս բանդապետին մնանէին և ուսանէին 'ի նմանէ զառ 'ի Քրիստոս հաւատն, և որք հիւանդութիւնս ունէին 'ի պէսպէս ցաւս ըմբռնեալք, և կոյրս բերէին առ նա, և նա աղօթիւք բժշկէր զնոսա։ Պղիսկերի ոմանն աշխարհականի տեսեալ զբժշկութիւնս զոր առնէր, եկն անկաւ առաջի նորա, աղաղակեաց և ասէ. Հաւատամ Աստուածն քո, զի նա է Աստուածն, և այլ չկայ որ բայց 'ի նմանէ։ Լաւ նոյն ժամանն կալեալ զնա զահՀնոյն և զօրականացն ածին առ թագաւորն, վասն իրացն որ եղև։ Իսկ թագաւորն խռովեալ և զանուն անգամ ոչ կամեցաւ հարցանել, այլ հրամայեաց զնա անդամ անդամ կոտորել։ Իսկ նա կատարելով 'ի խոստովանութիւնն Քրիստոսի, աղաղակեաց ասելով. Աստուած Աշնարիտ որ արարեր զամենայն, մի զիս անտես առներ՝ զանօթ անպիտան, վասն զի հաւատացի քեզ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, և երկնչիմ զի առանց սուրբ մկրտութեան եմ. կամեցայ մկրտել, այլ ոչ ժամանեցի, կամելով քո տեր փրկեցայց. վասն որոյ աղաչեմ զքեզ տեր Յիսուս, զարիւն կատարման իմոյ հանարեա ինձ 'ի մկրտութիւն, զի Աստուած արտադէտ ես, և քննիչ խորհրդոց և յօժարութեան մտաց։ Լաւ եկն նոնա ձայն յերկնից

1 Յօր. պակասի ԱՌՆԷ։

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՆԱՅԱԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ասելով։ Իսկ Գողիաթերի ուրախութեամբ առ իս, քանզի կատարեալ ես յիս. և այսպէս կատարեցաւ սուրբն։

Իսկ զոգան դարձեալ ասացին Գոգոլիտիանոսի, թէ բազումք երթալով 'ի բանդն ուսանին 'ի Գոտոգեայ, և զամենեսեան առ ինքն ձգէ բժշկելով զբազմութիւն յոյժ հիւանդաց. յայնժամ հրամայեաց ածել առ իւր զսուրբն Գոտոգիոս։ Իսկ Անանիանոսն ասէ ցթագաւորն. Զի քրիստոնէից դժուարանահ էն և վիճող, այլ մանաւանդ աղաչեա ողջանօք զայրդ, զի թերևս խորհրդամբ քո զոհէ աստուածոցն, բերկրացուցես զնա պատուովք։ Իսկ սուրբն Գոտոգիոս գալով յարքունիսն սաղմոսելով ասէր. Աստուած յօգնել ինձ նայեաց, և տէր յընկերել ինձ փութայ։

Յայնժամ սկսաւ աղաչել զնա թագաւորն և ասել. Տերամբ արեգակամբ և ամենայն աստուածովք. եթէ լես ինձ Գոտոգիոս և մատուցեալ զոհես աստուածոցն մերոց, շնորհեմ քեզ ինչս բազումս, և երկրորդ ինձ կոչեալիր 'ի թագաւորութեանս իմում, քանզի խնայեմ 'ի քեզ և զթամ 'ի քեզ, կամելով զկեանս քո, մանաւանդ քան եթէ մեռանել չարաչար՝ ոչ հաւանելով ինձ։ Իսկ սուրբ վկայն ասէ. Խարիսք ասացեր այժմ, ընդէր ոչ ասացեր ինձ յառաջագոյն այդպիսի բանս. այսչափ չարչարանաց արդ ուր խնդրեցիր զթրշնամանս իմ. ասէ թագաւորն. Շնորհեա ինձ հօր քո զյանցանս զայս, և զոհեա աստուածոցն, և ընդ ինձ պատուեսցիս յարքունիս։ Իսկ սուրբն Գոտոգիոս ասէ. Որովհետև վասն իմ զդիջացար թագաւոր, արդ ես հաճեցից զմիտս քո. ուր էն աստուածքն քո, երթիցուք առ նոսա։ Իսկ ուրախ եղև թագաւորն յոյժ, և հրամայեաց ամենայն պետացն և զօրացն՝ հանդերձ ամենայն հրապարակաւն գալ 'ի տաճար կուռն, և քարոզ կարդացեալ այսպէս. Զնա խորհրդակից Գողիլեացւոց Գոտոգիոս մեծին Պղտղմէի հաւանեցաւ զոհել։ Իսկ հեթանոսքն ամենեքեան ձախր առեալ աղաղակելով.

Ֆոնդ

Աստուծոյն յաղթեաց թագաւոր, Պոսկղիտիանոս յաւիտեանս թագաւորեա. մեծ էն աստուածք թագաւորի։

Մտեալ նոցա 'ի տաճար կուռն և 'ի լուսթիւն լինելոյ ամենեցուն առ հասարակ։ Լուկաս սուրբն Պետրոս, և Հայեցեալ 'ի պատկերն Աստուծոյ, ասէ. Ոմն ես աստուած և զքեզ պարտ է պաշտել մարդկան. իսկ որ կայր ոգին պիղծ 'ի պատկերն, գոչեաց ասելով. Ոչ եմ ես աստուած և ոչ որ ընդ իս է, այլ մի է Աստուած Հնարիտ որ արար զամենայն, և որդի նորա Յիսուս Քրիստոս և սուրբ Հոգին. իսկ մեք հրեշտակք նորա, ապստամբք եղեալ 'ի նմանէն՝ դէպ անուանիսք։ Աստ սուրբն Պետրոս. Լա՛ւ իբրև ոչ էք աստուածք ընդէր մոլորեցուցանէք զմարդիկ, զիսրդ և այժմ համարձակեք կալ այսր, իմ ծառայի Աստուծոյ գալ ասա, յորոյ վերայ անուանեալ է անուն Քրիստոսի Հնարտի որդւոյ Աստուծոյ։ Լա՛ւ նոյնժամայն եղև խռովութիւն մեծ և գոչիւն դիւացն ողբալոյ, և ամենայն կուռք տաճարին անկեալ փշրեցան, զնչան Քրիստոսի առնելով նորա ձեռամբ իւրով հանդերձ բանիւ. և տեսեալ քրմացն հեթանոսաց զեղեալսն, ընթացեալ 'ի վերայ սրբոյն Պետրոսի և կալեալ զնա աղաղակէին ասելով. Խարդ զկախարդս զայս, զի մոլեգնութեամբ զամենեսեան մոլորեցոյց և զաստուածսն կործանեաց։

Լա՛ւ սրտմտեալ թագաւորն դիւացն օգնականութեամբ և քրմացն առաջնորդելով, ասէ ցսուրբն. Զաղարդելիս և ամենայն կախարդութեամբք և մոլորութեամբ լի, ոչ յանձն կալար ինձ, զոհել Աստուծոյն։ Սուրբ վկայն ասէ. Նմիտ և անասնոթ, ես զիմ պատարագ կատարեցի առ Քրիստոս Հնարիտ աստուածն իմ. վասն այնորիկ ամենայն աստուածքն ձեր ապականեցան. զմնեայ այժմ դիտեա թագաւոր, զի ոչ

1 Յոր. Ապոստամբեալք եղեալ։

2 Յոր. Վասն։

իւրեանց և ոչ այլ ումեք կարեն օգնել ինչ. քանզի կուռքն անմիտնչք, և դևք մոլորեցուցիչք զանմիտ մարդիկ, իսկ այժմ 'ի Քրիստոսի ծառայէ կործանեցան։ Յայնժամ Թագուհին Աղեքսանդրի լուաւ զեղեալսն, ընթացաւ առ Թագաւորն և առաջի նորա աղաղակեր ասելով. Աստուած սրբոյն Գեորգեայ՝ անյաղթ զօրականի քո, քաւեա զիս զմեղաւորս, և մի յիշեր զանզգամութեան իմոյ զգործս տեր Աստուած. այլ յիշեա զկատարման իմոց զփոփոխումնս, և տուր ինձ մասն և բաժին ընդ քրիստոնեայս և ընդ ծառայի քում Գեորգեայ։ Հաւատացին և այլ բազումք 'ի տեր։

Յայնժամ բարկացեալ Թագաւորն Եհատ վՃիռ 'ի վերայ սրբոյն Գեորգեայ և Աղեքսանդրի, ասելով ցսուրբ վկայն. Ահա ամենաչար Գեորգեա, և զԹագուհին մոլորեցուցեր և արկեր ընդ մահուամբ. արդ երթ և դու ընդ նմին զարժանի առ 'ի յաստուածն հայհոյութեան դատաստան ընկալ։ Այլ ետուն այսպիսի վՃիռ. "Գեորգեայ խորհրդակցի Գալիլեացւոց, վասն ոչ երկրպագելով Աստուծոյ, այլ և զԹագուհին ևս ընդ ինքեան մոլորեցոյց զաստուածն հայհոյել, տամ զվՃիռս զայս, սրով զգլուխ նորա կտրել հրամայեմ, հանդերձ Աղեքսանդրեիւ առ 'ի նմանէ մոլորելոյ"։ Այլ նոյն ժամայն առեալ զնոսա զինուորացն՝ հանին արտաքոյ քաղաքին. երթալով յասպարէզ կատարմանն յօժարութեամբ Աղեքսանդրեայ սուրբ վկայիսն հանդերձ, և աղօթելով ընդ միտս իւր առ տեր 'ի շարժել շրթանցն միայն, և աչքն ընդ երկինս հայելով, նստան 'ի տեղւոջ միում, և արձակեաց զոգին խաղաղութեամբ։

Իսկ զսուրբն Գեորգիոս տարան 'ի տեղի կատարմանն, և ասէ ցզօրականն. Ունայնէք ինձ սակաւիկ մի, եղբարք, որպէս զի կացից յաղօթս. և իբրև թողացուցին նմա, հայեցեալ յերկինս տարածեաց զձեռս իւր՝

հառաչեաց մեծապէս և ասէ. Տէր Աստուած իմ, որ յառաջդ ես քան զամենայն յաւիտեանս, յոր ես ապաւինեցայ 'ի մանկութենէ իմմէ, 'ի գեղեցիկ և 'ի ճշմարիտ ակնկալութիւն քրիստոնէից, և յանսուտ խոստումն ծառայից քոց, անանց գանձ՝ որ յառաջ քան զլինդրէն մեր շնորհես մեզ զպարգևս քո ձրիս՝ որք խնդրեն զքեզ. լուր ինձ տէր և տուր զվկայութեանս խոստովանութիւն մինչև 'ի սպառ համբերել. նոյն այժմ ընկալ զոգի իմ, և փրկեա զիս յօդային և 'ի պիղծ հոգւոյն, և հանգո զիս ընդ հաճոյս քո և ընդ սուրբս, և թողութիւն շնորհեա հեթանոսացս, զոր գործեցինս ընդ իս. և զծառայս քո՝ որ կարդան զանուն քո՝ լուսաւորեա զնսա, 'ի գիտութիւն ճշմարտութեան. զի զամենեսեան կամիս զի կեայցեն. առաքեա զօգնականութիւն այնոցիկ որք կարդան զանուն քո, տուր նոցա զերկիւղ քո, և ցանկութիւն զառ 'ի սուրբս զսէրն, զի զայն շատակ նոցա կատարելով նմանեսցին հաւատոց նոցա. որպէս զի արժանի լիցին ընդ նոսա երկնաւոր կենացն և արքայութեանն յաւիտենից, զի քո է արքայութիւն և փառք Հօր և Հոգւոյն սրբոյ յաւիտեանս. ամէն։

Եւ յետ աղօթիցն խնարհեցուցեալ ծունր, ձգեաց զպարանոցն՝ ասէ. Կատարեցէք զՀրամանս Թագաւորին. և հարեալ սրով 'ի զօրականէն կատարեցաւ 'ի տէր սուրբ վկայն քրիստոսի Գեորգեա, յամսեանն մեհեկի Եգ, յաւուր ուրբաթու, յեօթներորդ ժամու, 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ Պասիկրատէս ծառայ սրբոյն Գեորգեայ զհետ գնացեալ Լիմոյ տեառնն՝ ամենայն ստուգութեամբ կարգեցի զյիշատակարանս։

ՍՐԲԱՆՁԵԼԻՔ

ՈՐ ԵՂԷՆ Ի ՁԵՌՆ ՍՐԲՈՅՆ

ԵՒ ՄԵԾ ՎԿԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԵՈՐԳԵԱՅ,

ՁՈՐ ԱՐԱՐԵԱԼ Է ՊԱՏԱՆՈՅՆ ԳԵՈՐԳԵԱՅ

ԳԵՐԵՑԵԼՈՅՆ ՅԱՋԳԷՆ ԳԴԱՅ

ԵՒ Ի ՁԵՌՆ ՍՐԲՈՅՆ ՓՐԿԵԼՈՅՆ

Ոչք պարգևայն Աստուծոյ արժանի լինել փափագէք, զյիշատակ և զտոն սրբոյն անդերկուանալի հաւատով և բաղում գթով տօնել մի ձանձրացուք։ Այս ստուգապէս գիտելով զի սուրբքն որ 'ի մէջ գովին բանիւ, այդ արասցեն 'ի վերայ մեր, և հովանի և վերատեսուչ . . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

Այս իբրև լսէին բարեկամքն և ազգայինքն ողբակից լինէին, և դարձեալ բանս մխիթարական խօսէին ընդ նոսա։ Գովտակ լինէր և մանուկն 'ի գերութեան անդ յերեկոյին յայնմիկ, յորում վաղիւն տօն էր սրբոյն։ Վանզի էր 'ի խոհարանոցին խարոյկ արկեալ յաղագս սպասաւորութեան թերմնի. զի սովոր խակ էր ազգապետն այն ջերմ ըմպել զգինին։ Այլոր մանուկն թախծեալ արտասուելով, և տխրեալ խորհէր 'ի մտի իւրում թէ 'ի տանն իմում յաւուր յայսմիկ հանդերձեալ են կատարել զյիշատակ սրբոյն ծնողքն իմ, և ոչք մերձ են անդր բարեկամքն այժմ 'ի սեղանի բազմեալ լինին.

ես ողորմելի և գերի նշդեհս յանցեալ տնտին ընդ նոսա
էի տնտելով և ուրախանալով ընդ այնոսիկ՝ որ յամենա-
սեփհական տաճար սրբոյն Ժողովէին պաշտօնակից և
եղանակակից լինէի. և այժմ յերկրի այլազգեացս 'ի
գերութեան և 'ի ծառայութեան պանդխտիմ։ Ես միայն
սուրբդ Աստուծոյ գտայ անարժան յայնցանէ որք մնա-
նէին 'ի պատուական տաճար քո։ Աղդ այսօր կատա-
րեն ծնողքն իմ զյիշատակ քո սուրբ, և զիս ոչ տեսա-
նեն. յոյժ տխուր է և մայրն իմ, տեսանելով զազգա-
կանս և զբարեկամս մեր, զի Ժողովին 'ի տոն քո և զիս
ոչ տեսանեն. և ոչ լսեն զձայն սաղմոսելոյ իմոյ։ Օ իմդ
ոչ տոչորի սիրտ նորա, և պատառէ զպատմուճան իւր,
ցաւագին հարուածս ածելով 'ի վերայ անձին իւրոյ. ո՞
բարձցէ զհառաչանս հօր իմոյ, և կամ ո՞ կարիցէ կալ
ընդդէմ ողբալոյն նորա, և ո՞ փարատեսցէ զարտասուս
տառապեալ մօր իմոյ։ Այաւ ես այժմ զնոր օրհնու-
թիւնս և կամ զոր սաղմոս երգեցից 'ի տոնի քում,
բայց միայն արտասուս անօգուտս, և հառաչանս ու-
նայնս 'ի վշտացեալ սրտէ վերամտաւոյց։ Ողջ լեր
մայր իմ, ողջ լերուք ամենայն ազգականք և սիրելիք և
ծանօթք իմ, և յիշեցէք զիս 'ի գերութեանս։ Եթէ
իբրև զկենդանի յիշէք, աղօթս արարէք վասն իմ, և
եթէ իբրև զմեռեալ, ողբացէք 'ի վերայ իմ։ Ողջ լեր
և դու քահանայ պատուական սպասաւոր սուրբ տաճա-
ւրիդ, որ դաստիարակեալ ուսուցեր ինձ զաստուածա-
շունչ գիրսս. և արդ յիշեա զիս 'ի պատուական աղօթս
քո։ Ողջ լերուք և դուք հասակակիցք իմ, և սաղ-
մոսակիցք և եղանակակիցք, և այժմ 'ի տոնի սուրբ
վկայիս՝ մի մոռանայք զօտարս յօտարութեան և լզգե-
ցիս 'ի գերութեան։

Օ՜այս ասելով լուութեամբ արտասուս հեղոյր գե-
տաբար յաչաց իւրոց, զի ոչ համարձակեր հառաչանօք
ողբալ յահէ այլազգեացն։ Այլ այժմ միտ դիք զար-
մանալոյ աքսորելեացս, տարածեցէք զսիրտս, և բացէք

ընդարձակագոյն զլսելիս ձեր։ Մինչդեռ զայս խորհեր մանուկն Գեորգ, Ձեպէին զնա ծառայիցքն զի փութացուսցէ զանօթ Ջերմին, և բարձցէ 'ի կայծականցն. և նորա սրբեալ զարտասուս յերեսաց իւրոց և առեալ զանօթն 'ի խարուկէ անտի յորժամ եռայր ուժգին յորձանօք, ով զարմանալոյ սքանչելեացս, հիանամ յոյժ և հեր զլսոյ իմոյ խուզանէ զօրէն սրսացեալ՝ փշոց, և ոչ գիտեմ զինչ ասացից. սակայն պարտ էր զի կատարեսցի բան տեառն որ ասաց ցառաքեալսն. Որ հաւատայ յիս՝ զգործսն զոր ես գործեմ և նա գործեսցէ։ Մինչդեռ երթայր մանուկն և անօթն 'ի ձեռին իւրում, յանկարծակի յափշտակեցաւ 'ի բարձունս, և յական թօթափել բերեալ զնա սուրբն կացոյց 'ի մէջ տանն՝ յորում կոչեցեալքն բազմեալ էին, ունելով 'ի ձեռին իւրում զանօթն Ջերմին, և այնպէս յորձանս առնոյր տակաւին իբրև թէ առբարձեալ է 'ի կայծականց հրոյն։ Զոր իբրև տեսին ծնողքն նորա, և այնոքիկ որ բազմեալ էին, հիացան յոյժ, և մեծաձայն բարբառ արձակեցին. և յառաւել ուրախութենէն և յանակնածելի խնդութենէն ծնողք նորա անկան անմռունչ 'ի վերայ երկրի, և այլքն զիրկս արկեալ համբուրէին զնա, և սկսան հարցանել վասն գալստեան նորա։ Նա մանուկն ծանուցեալ զտուն իւր և զծնողսն, և զայնոսիկ որ բազմեալ էին, տարակուսեալ եղև և 'ի հիացման մեծի. ապա եկեալ 'ի միտս իւր՝ պատմէր վասն անձին իւրոյ՝ այսպէս ասելով. Զայս միայն գիտեմ, զի 'ի ժամուս յայսմիկ 'ի գերութեան և 'ի ծառայութեան էի յերկրին Խուզարաց, և անօթն այս զոր տեսանէք 'ի ձեռին իմում 'ի խոհարարանոցէ կայծականցն առի զսա և կամեցայ եղանել առ տէրն իմ։ և յեղանելն իմ ընդ սանդուխս տաճարին՝ տեսի անդ այր մի 'ի վերայ երիվարի 'ի ձև զինուորի՝ որ առաւել քան զարեգակն

1 Այսպէս յորինակին։

պայծառացան շառաւեղք նորա. և յանկարծակի յափրշ տակեաց զիս, և ես եղէ իբրև 'ի հիացմանն մեծի, և ոչ գիտացի այլ ինչ բայց միայն լուայ ձայն ինչ իբրև 'ի ծփա նաց ջուրց որ հարկանէ զգարշապարս երիվարի, և յական թՀՀարեալ աստ գտայ՝ ուր տեսանէք զիս. քանզի էի 'ի մէջ Ճառագայթից լուսոյ, և ոչ գիտէի թէ ուր եմ ես, մինչև հարցէք զիս։

Ի այս իբրև լուան՝ վաղվաղակի արտաքս ելեալ 'ի տա նէն խնդրէին զտանել զիրկիչ և զկեցուցիչ մանկանն. և քանզի անհնար էր տեսանել զարագահաս նահատակն, անդրէն դարձան 'ի տունս իւրեանց, և հիացեալ էին ընդ զարմանալի սքանչելիսն. մանաւանդ զի դեռ ևս եռայր անօթն 'ի ձեռին մանկանն։ Ի արթեան ծնողք մանկանն, և գիրկս արկեալ համբուրէին զնա, և հան դերձ արտասուօք ասէին. Ընդարև սա է որդեակն մեր, Ճշմարիտ արդեւք իցեմք եթէ յանուրջս. զի եթէ Ճիշ մարիտ՝ տեսաք զլոյս աչաց մերոց և զմխիթարիչն սրտից մերոց։ Ցոհանամբ զպարգևողէն Ի աստուծոյ և զմեծ վկայէ նորա, և որք լայիք ընդ մեզ յաղագս կորստեան որդւոյս մերոյ, այժմ ուրախացիք ընդ յայտնել լուսոյ մերոյ։ Ի ինչ ոչ ասէին և կամ զինչ ոչ գործէին արժանի գոհութեան եղելոյ 'ի վերայ նորասքանչ գործոյն։ Ի ու եղև բանս այս ընդ ամենայն երկիրն և փառաւորէին զԻ աստուած և գոհութիւն մատուցանէին սրբոյն, և հրամայեցին զի յեռացեալ հրոյն յայտնմանէ արբցեն ամենեքեան բազմաւաքն. քանզի ոչ երբէք դադարեր յեռալոյ։

Ընդ լուարուք և այլ սքանչելիքս 'ի վերայ սքանչելեաց. անօթն այն զոր ունէր մանուէն 'ի ձեռին իւրում, ոչ էր մեծ, այլ փոքր յոյժ, և որք ժողովեալ էին 'ի յիշատակ սրբոյն՝ էին բազմութիւն յոյժ, և ամենեցուն բաւական եղև որք հանդիպեցան անդ, և ոչ երբէք փոխեցաւ 'ի ցրտութիւն յայնքան երկարութեանն ժամուն. այլ այնպէս յորձանս առնոյր որպէս թէ 'ի բոր

բոքմանէ հրոյ ստիպեալ լինէր. և որպէս 'ի Ժամանակս Լ.ղիայի ինոջ այլուոյն օտարասիրի կախակ ձիթոյն ոչ նուազեաց և ստիպոյ պղերն ոչ պակասեաց, այսպէս և անօթս այս ոչ նուազեաց յայնքան առատապէս բաշխմանէն, այլ ըստ օրինակի շերտից որ 'ի մէջ ջրոյն լինիցին, և արտաքոյ բնութեանն բորբոքեսցի հուրն և ջուրն ոչ շիջուցանէ, այլ առաւելապէս բորբոքէ, այսպէս և աստուածային հրոյս զօրութիւն 'ի ձեռն սրբոյ վկային ազգմանն զանօթ ջերմին բորբոքէր ուժգին։ Ո՞վ նոր և զարմանալի հիացմանս։ Ո՞ռ լսելով զբանչելիս զայս և ոչ փառաւորեսցէ զայն՝ որ փառաւորեալ է 'ի սուրբս իւր։

Լսակ ծնողացն առեալ զմանուին ընթացան յամենասեփհական տաճար սրբոյն. և խնդութեան արտասուօք թանային զատակ եկեղեցւոյն, և այսպիսի մատուցանէին գոհութիւն. Գոհանամք զքէն սուրբդ Լ.ստուծոյ, և զքոյին բարեխօսութենէդ և զօգնականութենէ, զի ոչ անտես արարեր զպաղատանս մեր։ Լ.յ զերաշխատութիւն քո կատարեցեր, և զորդիս մեր ամբողջ պահեալ հասուցեր առ մեզ. արդ պարգևեա քաւութիւն ծառայից քոց յաղագս նախատանաց և չար բանիցն զոր խօսեցաք վասն քո, քանզի ցաւ գորովին խոցոտէր զհոգիս, և բնական գութն ծնողական գալարէր զաղիս, և բան անպատշաճ հարկաւորէր զիս խօսել։ Զայս և առաւել քան զայս գոհութիւն մատուցանէին սրբոյն։ Լ.ս ետուն զանօթն զայն 'ի տաճար սրբոյն 'ի պէտս սպասաւորութեան անարատ մարմնոյ և արեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, 'ի հաստատութիւն տեսողաց և 'ի վկայութիւն սքանչելեացն՝ որ եղև առ մանուին։ Լ.ուան ամենայն բնակիչք կողմանցն այնոցիկ զզարմանալի զքանչելին, և եկեալ տեսանէին զանօթն 'ի տաճար սրբոյն, առաւել գոհութիւն մատուցանէին Լ.ստուծոյ որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ, և լսէին։ Քանչելի է Լ.ստուած 'ի սուրբս իւր՝ որպէս Դաւիթ երգէ,

և աբանչելի արար տէր զսուրբս իւր 'ի վերայ երկրի։ Վա՜շ մեծի աբանչելեացս, վա՜շ հաւատոց ծնողացն, վա՜շ իմաստնոյն և բարեգութ օգնականութեանն։ Օ՜ինչ աբանչելի քան զայսոսիկ Մ՚մբակումայ մարգարէին, որ յսիրտակեցաւ 'ի միգական երկրէն և մատոյց զնաչն 'ի Ռաբելն Դանիելի մարգարէին 'ի մէջ առեւծուոյն, և վաղվաղակի անդրէն դարձաւ 'ի տեղի իւր։ Իսկ պատկառը Ղնտազգեաց վկայս Դեորգիոս 'ի ծառայութենէ զմանուկս յսիրտակեաց ազատելով 'ի բարբարոսական գազանաբարութենէն, յական թօթափել կացուցեալ 'ի տան իւրում, որպէս սուրբ վկայքն Բրիստոսի Դուրիաս, Սամիշաս և Բ՚ուիբաս զաղջիկն կենդանոյն եդեալ 'ի գերեզմանի՝ յսիրտակեալ և կացուցեալ յական թօթափելն 'ի տաճարն իւրեանց, և ետուն մեր իւրեանց ամենողջ անդամոք։ Բ՚ոյսպէս երագահաս օգնական Դեորգ խոնարհեալ յաղաչանս ծնողաց մանգանն՝ ամենողջ պահեալ 'ի պատերազմն և ազատեալ 'ի հեթանոսական ծառայութենէն հատոյց առ ծնողսն իւր։

Բ՚ուղղու՛ մեզ ամենազարդ և փափագելի վկայ, հաստատուն և իր և անուն, յԲ՚ստուծոյ մշակեալ 'ի կենսաբեր տունդ. քաջազուարթ և պտղաբեր այգի՝ որ կերակրես զհոգիս և զմարմինս այնոցիկ՝ որք հաւատով կարդան զանուն քո։ Ո՚վ պարծանք մարտիրոսաց և պայծառութիւն Ղնտազգեաց արանց, որ ամենայն վտանգելոց պատրաստական ապաւէն գտանիս, և հովանաւորեալ պահպանես, որք անցերկուանալի հաւատով խրնդրեն զքո միջնորդութիւնդ. ժամանեա և մեզ յօգնականութիւն, որք փափագանօք կարդալք զերագահաս անուն քո, և կատարեմք բաղձանաց զյիշատակ քո. ազատեա զմեզ յերևելի և յանտերևոյթ թշնամեաց դաւաճանութենէ։ Օ՚քեզ կարդայ և փառաւորէ ամենայն բերան, զքեզ օրհնէ ամենայն լեզու, և ցանգալի և աստուածազարդ անուն քո հռչակեալ է ընդ ամենայն տիեզերս. զքեզ սովորութիւն է կոչել յօգնականու-

թիւն ամենայն հաւատացելոց, և փրկող և ապաւէն և անպատկառելի միջնորդ ստացեալ են։ Դու ինքն գեղեցապայծառ և պսակազգեաս վկայ, մեծդ նահատակաց, որպէս ստացեալ ես համարձակութիւն առ նահատակդիրն և պսակապարգև արարիչն մեր։ Ոչեւ յօգնականութիւն մեզ զնահատակիցս քո զմարտիւրոսս, զբրիստոնէից ապաւէնս և զառաջնորդս, զնախավկայն զանոխական զՍտեփանոս, զԼՕՎՀՈՎՐՈՍ զոր 'ի կարդալն յօգնականութիւն հաղորդ քեզ կոչեն զնա հանապազ, զՍերկուռիոս վկայ, զՊՂԵՄՈՐԻՈՍ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆ, զՊՈՂԿԱՒՈՍ վկայ, զԱՍՏԱԹԷՈՍ և զմանկունս նոքա, զԱՍՏՈՒԱՏԻՈՍ և զընկերս նորա, զԱՐԵՔ վկայքն՝ որ ըստ օրինակի քո ասպրեցուցին զդուստր այրոյն 'ի գերեզմանի եղեալ կենդանւոյն, զՄՂՆՂԻՈՍ, զՊԵԳԱՍԻՈՍ և զընկերս նորա, զՊՈՌՈՍ, զՑարաքոս և զՆԴՐՈՆԻԿՈՍ, և զամենայն սուրբս և զարի նահատակս. յաղագս հաստատութեան ինքնակալ թագաւորաց, խաղաղութիւն պարգևել աշխարհի, և յաղթութիւն ընդդէմ թշնամեաց, բարեխօսութեամբ ամենասրբուհի և միշտ կուսին Մարիամու, զի փառաւորեսցուք զաստուածն Յիսուսն, հանդերձ Հարբ և Հոգւովն սրբով, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Արագործեցաւ գործ սքանչելեացս 'ի ժամանակս Փոքրասու Տիւրանոսի կայսերն Յունաց։ Եւ թարգմանեաց 'ի Հոռոմոց 'ի Հայս սուրբ քահանայապետն Հայոց մեծաց Գրիգորիոս Ա կայսեր, զոր և պսակակից արասցէ Քրիստոս սրբոյ վկային և աղօթիւք ամենայն սրբոց. և ինքն եղիցի օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ԵՒ ՓԱՌԱՒՈՐԵԱԼ ՎԿԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԳԻՐԳԱՅ

ԱՌԱՋԻ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԹԱԳԱՒՈՐԱՅՆ

Ի ժամանակս հալածանաց եկեղեցւոյն Քրիստոսի յաւուրս ձմեռնացեալ յարուցմանն համբրէն ամբարշտութեան, յորժամ կացին Թագաւորք իբրև զմիրիկ գազանացեալք, և ապականէին զբարեպաշտութեան զքարոզսն, և ըստ իւրեանց ամպարշտութեանցն՝ կոտոր զոհել հարկեցուցանէին։ Իսկ Թագաւորն Դատիանոս՝ նստեալ յաթոռ դատաւորութեան գրեաց թուղթ օրինակ այսպէս. Մեքենակալ Թագաւոր Դիոկղիտիանոս ամենայն աշխարհի խնդալ։ Քանզի համբաւ ընթացաւ 'ի լսելիս եթէ զոր 'ի Աբրահամայ ծնաւ պատուէն և երկրպագի, և Աբրոնն և Եղրմաս և Եղրմէս և Եղրակլէս և Դիոնեստոս և Պեսագրոն և այլք 'ի քաստուածոցն ոչ երկրպագին, և զՔրիստոս՝ զոր Հրեայքն գաւազանօք մաշեցին՝ զնա աստուածաբանեն. վասն այսորիկ

1 Միւս օրինակն ամենայն ուրեք Դատիանոս ասէ և ոչ բնաւ Դիոկղետիանոս։ Իսկ սա ասա 'ի սկզբանն եւեթ։

թագաւորութիւնս մեր հարկեցուցանէ զՏէր բարե-
բար աստուածոց մերոց, որով և գրեմք ամենայն աշ-
խարհի գալ'ի համբաւս յայս։

Այլ հասեալք վաղվաղակի 'ի լուր գրելոյն, և ժողո-
վեալ զամենայն աշխարհն Եկին հասին Եւթանասուն
թագակալք և բազմութիւն զօրաց նոցա, որպէս զի ոչ
գոյր բաւել տեղւոյն այնմիկ. և նստեալ ինքնակալն
Պտոկղիտիանոս թագաւորն, և որոց ընդ նմայն էին
թագակալքն շուրջանակի, և հրամայեաց զանանջան-
ման առաջի դնել. և էին տանջանարանքն այսոքիկ՝
արկեղք պղնձիք, և տապակս, և սուր երկայրքք, և
առաստնահանք, և կատսանք և մնահանք, և անիւք, և
շանիւղք, և սանդք, բևեռք, և շղաղիք երկայնաձիգք,
և ջղալուծք, և որ ինչ միանգամ երկաթի արուեստից
'ի վաղնջուցն պատրաստեալ էր մեքենայս, և հրա-
մայեաց զայն առաջի դնել, զի որոց ունէին յօժարու-
թիւն վկայել՝'ի տեսլենէ տանջանացն երկուցեալ'ի բաց
փախչէր զմտաւ ածելով զիւրաքանչիւր ուրուք զՏար-
ցաքնութիւն լինել յինքեանս. և ոչ որ այսուհետև
համարձակէր ասել եթէ ես քրիստոնեայ եմ, մինչև
ցամիսս երիս, զի ասաց խորամանգ վիշապն այն, եթէ
գտից զոք ընդդիմացեալս՝ հալածեալ զՏէր աստուա-
ծոյն՝ յարուցից 'ի վերայ նորա հայրենական վնասս,
և կուտեցից զանազան տանջանսք և գործականսք կաղ-
մութեամբ և նոյն ինքն կատարած տեսողայն մահ։

Յայնժամ ելեալ մատչէր անդ ոմն երիտասարդ
իբրև զասող ծագել'ի մէջ երկրի և երկրի 'ի մարտի-
րոսաց ազգէ յաշխարհէն Պամիրաց և անուն նորա
Պէորգէոս, զկնորեալ 'ի գունդն Լիկրատայոց,
բարւոք տեսլեամբ և կատարեալ հաւատով, փարթա-
մացեալ ընչիւք բազմաք, ընթացաւ առ դատարան թա-
գաւորին զի լցուսցէ նովաւ զյանկութիւն իւր։ Այլ
յորժամ ետես սուրբն Պէորգէս եթէ զգևան պա-
տուէն, վաղվաղակի զառաջեռն ինչս իւր ետ աղքատաց,

և մերկացեալ ինքնին 'ի հանդերձից իւրոց, և աղաղակեաց ասելով. Քրիստոնեայ եմ, զիարհուրդս ձեր և զսպասնալիսդ ամենայնիւ զեղ զաստուածքդ հանդերձ ինքնակալաւդ, և զսոսա զոր ոչ էն աստուածք՝ մի անուանեք աստուածք, զի աստուածք զոր ոչ արարին զերկինս և զերկիր՝ կորիցեն։ Եւ հայեցեալ 'ի նա անդնդային վիշապն ասէ. Թագուցեալ էիր 'ի միջի աստ իբրև զդոյզն ինչ, արդ մատիր և զոհեա աստուածոցդ, երկիր զգուշութեամբ 'ի նոցանէ, քանզի յոյժ գիտաղ էն յանցաւորաց թողութիւն շնորհել, և ծանիր այսուհետև զի Աստուծոյն էր որ կախեաց զերկինս՝ իսկ Աստուածպես զերկիր հիմնեցոյց. Եւ Սկամանդրոս և Եդրատէս զարեգամն և զլուսին պայծառացուցին. արդ վասն որոյ ասէին Քրիստոս այնպիսի ինչ ոչ արար։ Բայց ասա ինձ, յումմէ՞ քաղաքէ ես դու, և զինչ անուն է քո, և զինչ եղև պէտք հասանել քեզ աստ։ Իսկ սուրբն Պէտրոգէոս ասէ. Եթէ Աստուծոյն զերկինս կախեաց, բարւոք է՝ զի ասես թէ աստուած է. և թէ Աստուածպես զերկիր հիմնեցոյց, բարւոք ասես թէ աստուած է։ Իսկ ո՞չ առնդես երեքթշուառեան, աստուածս անուանել զկուռդ. բայց ես ոչ վասն ձեր և ոչ վասն թագաւորացդ որ ընդ ձեզ նստին ասացից զանուանս մարգարէիցն. և արդ փոքր ինչ յիշեցուցից զողորմութիւնս նոցա, որ ինձ զայդպիսի պատասխանի առնես ո՛վ թագաւոր. զՊետրոս գլխաւոր առաքելոյն՝ ասես եթէ զԱստուծոյն զկորուստն աշխարհի. զԵղիա թեզբացին որ 'ի յերկինս շրջելով և յերկինից կամարն մերձեցաւ, եթէ զԱ՝ենանդրոս որ կախարդեաց ըզՊեսդոս զ յդացեալն ընդ Ա՝ենանդրեայ, յորմէ ծնաւ երկուս որդիս զԱ՝բաւ և զԱ՝ժոյն, Պանդացիք նախաշինողք որ յաղագս գործոյն իւրեանց խորասոյզ եղեն յանդունդս ծովուն։ Օ Աստուծոյն՝ եթէ զԵդրակլէս՝ եթէ զմերոյ մարգարէիցն, զառաքելոյ և զմարտիրոսաց պսակն, և զպարգևան Ա՝սրիտոնս Աստուածածնի,

եթէ զձեր զ՝պողինէ մարդասպանին. ամաչելով 'ի բռնաւորացդ, քանզի ոչ են աստուածք՝ այլ կուռք խուլք։

Եւ զայրացեալ Թագաւորն հրամայեաց կախել զնա 'ի բիլոն կամարին, և երկաթի քերանոք քերել զնա՝ մինչև փոր նորա յերկիր հեղոյր, և շաղախեալ արեամբն իւրոյ ամենայն մարմին նորա։ Իբրև զայս վերս արիաբար ընկալաւ, հրամայեաց առնել կօշիկս երկաթիս, և ագուցանել զնա, և յոլոքսն հարկանել բևեռս՝ և սկսան բևեռօք ծակոտել զՔրիս ոտից նորա, և շուրջ հեղոյր արիւն նորա։ Իբրև զայս վերս արիաբար ընկալաւ, կախեցին զնա գլխիվայր, և բևեռս հարին 'ի գլուխս նորա, և տարան զնա 'ի բանդ. և հրամայեաց շինել շինուածս բարձր, և անդ բևեռել զոտս նորա. և հրամայեաց իջուցանել զնա և կապիտ դնել 'ի գլուխն, և որպէս ագռոյ հարկանել զգլուխ նորա, և ուղիղ գլխոյ նորա ելանէր ընդ ունգունս նորա։ Յայնժամ հրամայեաց տանել զնա 'ի բանդ. և բերին ջրս ցիս, և կապեցին զոտս և զձեռս սրբոյն անդ. և վէմ մի մեծ ծանր աշխատութեամբ բառնալ և դնել 'ի վերայ նորա։ Եւ 'ի գիշերին յայնմիկ երևեցաւ նմա տէրն ասելով. Օ՜ բացիր և քաջալերեա նահատակ իմ Գէորգիէ. յանձն իմ երդուայ զի ոչ ոք է 'ի ծառանց կանանց մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ և զմարգարէ, և 'ի Թագաւորութեան իմում մեծագոյն քան զքեզ 'ի վկայս իմ՝ ոչ ոք յարիցէ. քանզի վկայութիւնդ առաջի եւթանասուն Թագաւորաց եղև և զեօթն ամ՝ երիցս մեռցիս, և ես յարուցից զքեզ. իսկ 'ի յորորդումն ես ինքնին եկիցս առ քեզ 'ի վերայ ամպոց՝ սրբովք հրեշտակօք, և առիցս զաւանդն՝ զոր աւանդեցի 'ի պատուական մարմնի քում. արդ զօրացիր և մի երկնչիր։ Եւ զայս ասացեալ տէրն վերացաւ յերկինս՝ հանդերձ հրեշտակօք իւրովք. իսկ սուրբն Գէորգիոս անսինջ կայր մինչև ցառաւօտն վասն յորդորմանն Քրիստոսի։

Լբ ընդ առաւօտն հրամայեցին առաջի տանել բեմին. և կացեալ առաջի սուրբն Վէորգէոս սաղմոսելով, «Լսատուած յօգնել ինձ նայեաց և տեր յընկերել ինձ փութա»։ Լբ ածեալ զնա առաջի բեմին, ասէ սուրբն Վէորգիոս ցԹագաւորն. Զու և Լպողոսն քո, և ես և Վրիստոսն իմ։ Լբ զայրացեալ Թագաւորն հրամայեաց զնա պրկել, և հարկանել զԹիկունս նորա հաւրիւբ և քառասուն արջառաջոք, և դարձեալ արկին զնա 'ի բանդ, մինչև խորհեսցին Թէ ի՞նպէս կորուսցեն զնա։ Լբ 'ի վաղիւ անդր նստեր Թագաւորն Վիսոկ զիտիանոս 'ի վերայ վիմին, գրեաց Թուղթ օրինակ այսպէս. «Լմենայն աշխարհի խնդալ՝. եԹէ ոք մոգ գոլով կարասցէ զմոգութիւն քրիստոնէից լուծանել, եկեսցէ առ իս, և տաց նմա երեսուն լիտր ոսկի, և ստացուածս՝ որչափ և խնդրեսցէ յինէն»։

Լբ ահա գայր ոմն անուն Լթանասիոս, ասէ՝. Հրամայեա ածել զուարակ, և ածել առաջի բեմին. և յարուցեալ Լթանասիոս խօսեցաւ յՍնկն զուարակին, և առ ժամայն հերձաւ զուարակն՝ և եղև յերկուս։ Լբ Թագաւորն ուրախ եղև, և ասէ. Հրամարտակս կարող ես լուծանել զմոգութիւն քրիստոնէիցն։ Իսկ Լթանասիոս ասէ. Լնսա, ով Թագաւոր, և տեսցես մեծ զարմացումն. արդ հրամայեա բերել լուծ առաջի բեմիս. և վաղվաղակի բերաւ։ Լբ եդեալ Լթանասիոս զլուծն 'ի վերայ զուարակին, խօսեցաւ յՍնկն զուարակին և առ ժամայն ողջացաւ զուարակն։ Յայնժամ հրամայեցաւ առաջի ածել զսուրբն Վէորգիոս, և ասէ ցնա. Վէորգ-

1 Միւս օր. Թագաւոր Դասիանոս աշխարհի ամենայնի խնդալ... երեսուն լիտր ոսկի և երկերիւր լիտր արծաթոյ։

2 Միւսն. Թագաւոր, յաւիտեան կեաց. ո՞ խօսեցի առաջի իմ համարձակ, Թէ ոչ յանդգնմանէցիս զմոգութիւնս նորա։ Իսկ Դասիանոս ասաց. Զի՞նչ է որ առնես 'ի լուծումն քրիստոնէից։ Իսկ ԼԹանասիոս ասաց. Հրամայէ բերել զուարակ, և այն։

գէոս զսա վասն քո ածի այսր, և կացուցի առաջի թա-
գաւորութեան իմոյ և առաջի քո. կամ լցծ դու զմո-
գութիւն դորա, կամ լուծցէ դա զմոգութիւն քո։ Լ�չ
նայեցեալ սուրբն Գէորգէոս առ ԼԹանաս և ասէ.
Վոյթացիր, որդեակ, արա զինչ և կամիս առնել. քանզ
զի տեսանեմ զՀետ սակաւու մի հասանել հնարհաց 'ի
վերայ քո։ Իսկ ԼԹանասիոս առեալ զբաժակ խառ-
նեալ ձեռամբ իւրով, և կարդաց զանուն դիւաց բաղ-
մաց, և եհատ ըմբեալ սրբոյն Գէորգիոսի, և ոչ ինչ
մնաս եղև նմա։ Իսկ ԼԹանաս ասէ. ԼՍլ և միան-
գամայն տաց ըմպել նմա. և եթէ ոչ ինչ արասցէ,
գնամ և ես առ խաչելեալն։ ԼՉ առեալ միւս այլ բա-
ժակ, և կարդաց զանուն դիւաց չարագոյն քան զառա-
ջինն, և եհատ ըմպել սրբոյն Գէորգէոսի. և ոչ ինչ մնաս
եղև նմա։ Յայնժամ ԼԹանասիոս ասէ ցսուրբն
Գէորգէոս. ՆՀրաց Հնարտութեան Գէորգէս,
ողորմեա հոգւոյս իմոյ, և տուր ինձ առ 'ի Քրիստոս'
զկեանսն, որպէս զի և ինձ բացցէ դռնապանն զդուռն
Հնարտութեան։ ԼՉ տեսեալ թագաւորին զեղեալ
զարմանս, հրամայեաց զԼԹանասիոս հանել արտաքս
'ի քաղաքէն և սպանանել[2]։ ԼՉ կատարեցաւ խոստ-
վանութիւն նորա բարի վկայութեամբ 'ի Քրիստոս,
'ի յուլիս ԺԴ, յաւուր շաբաթու 'ի ժամ ինն երորդի։

Իսկ զսուրբն հրամայեաց տանել 'ի բանդ, և ասաց
առնել անիւս մեծամեծս, որ ունէր բևեռս երկաթիս
և շաղափս[3] և ատամնահանս, և 'ի ներքոյ սուր երկ-
սայրիք, և եղև մեքենայն իբրև զմանուլս հիւանդական.
և հրամայեաց բերել զայն առաջի բեմին։ ԼՉ եկեալ
սուրբն Գէորգէոս, և տեսեալ զմեքենայն հաստա-

1 Միւսն. Ցուր ինձ զառ 'ի Քրիստոս կենաց։

2 Միւսն. Արով սատակել։

3 Միւսն. Շաղափս ատամնաթափս և 'ի ներքոյ սուր երկայրիս. իբրև եղև մեքենայն իբրև զմանուելոյ հիւանդական։

տեալ, և իբրև զմանուկս հիւանդականս յօրինեալ, և 'ի դողմանն եղեալ՝ յինքեան ասէր թէ Ով ապրեցայց 'ի մեքենայէս յայսմանէ։ Եւ յետ այսր նորոգեալ ըզ-խորհուրդս իւր, ասէ։ Գէորգիէ, ընդէր այդպիսի խորհուրդ խորհեցար 'ի սրտի քում. գիտեմ զՏէր մեր Յիսուս Քրիստոս 'ի մէջ երկուց աւազակաց խաչեալ։ Եւ համբարձեալ զաչս իւր առ բարեգործողն Քրիս-տոս, ասէ. Ընկկիզքն, անփոխանորդ, յաղթող և վկայից պսակ, կարդամ Ճշմարիտ ծնունդ Հօր Քրիս-տոս Աստուած, որ 'ի նաւին յարուցմանց հողմոյն ասա-տեցեր, և զչնչումն վիշապին դադարեցուցեր. որ զան-հաւան հրեշտակսն 'ի խորս տարտարոսին արգելեր, և էն նոքա 'ի նեռքոյ նգաց դժոխոց դրանց, 'ի վիշա-պաց տանջեալք և հրամանի քում ընդդէմ ոչ կարէն կեալ. և զպատկերն ոսկի փշրեցեր, և զանզգամ թա-գաւորն 'ի մարդկանէ հալածեցեր, և ընդ գազանս վայրենիս զբաժին նորա եդեր, մինչև յեւթն ժամա-նակ փոխեցաւ 'ի վերայ նորա, յորժամ գիտաց եւթէ դու ես տէր Աստուած միայն, որ 'ի վերայ ջրոց գնա-ցեր, և 'ի Մարիամայ եղեր. զոր ոչ ոք 'ի մարդկանէ կարող է քննել զծնունդն Ճշմարիտդ Յիսուս Քրիս-տոս. եկ առ իս առ ծառայս քո, և ապրեցո զիս 'ի տանջանացս որ շուրջ պատեալ է զինև, քանզի դու ես օրհնեալ և փառաւորեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ կատարեալ զաղօթսն, ընկեաց զանձն իւր յանիւն, և սաստկադոյն ըմբռնեալ կոտորեցաւ ամե-նայն մարմինն նորա, և գիտացին եւթէ վախճանեցաւ։ Եւ թագաւորն Գոմկղետիանոս ամբարձեալ զաչս իւր, ասէ. Գիտացէք ամենայն ժողովուրդք, զի ոչ գոյ այլ աստուած բայց յԱստղինէ և Եղիսեպայ և Բարազ-դայ և Եղրակլէսի և Փեստոսի և Պեսագրոնի [1], և

1 Միւսն Պոռիդոն, փոխանակ գրելոյ Պոսիդոն։

յիսգաց անտի մեծն Աբրահամ Լիսիեսացւոց։ Եւ արդ ուր է Աստուածն Գէորգու. ընդէր ոչ եկն ասա, և փրկեաց զսա 'ի ձեռաց մերոց։ Եւ հրամայեաց ինքն ցանել զնշխարս նորա 'ի գուբ ուռնայն, և քար մեծ եդեալ 'ի վերայ նորա, ասէ, զի մի ոք 'ի քրիստոնէիցն եկեալ գողասցի զնշխարս նորա, և յարուցանիցէ վկայարան յանուն նորա։

Եւ էր ժամ իբրև վեցերորդ, և ամենեքին մնին 'ի Հաշ։ Իսկ 'ի գնալն նոցա շարժումն մեծ եղև, և որպէս թէ ամենայն երկիր մթացեալ, և ամենայն երկիր շարժեալ. և փողեալ Միքայէլ զեղբէր 'փողոյն, և ահա կառք հրեղէնք յերկնից, և Տէրն 'ի վերայ կառաց քերովբէից, և Միքայէլ և Գաբրիէլ և Ռաֆայէլ և Սաղաթիէլ[2]։ Եւ ասաց տէրն ցՄիքայէլ. Միքայէլ հրեշտակապետ ուխտի իմում, էջ 'ի բերան գրիդ, և կցեա զոսկերս Գէորգայ 'ի միասին, վասն զի ասաց մինչդեռ 'ի մնալնի էր, եթէ ոչ կարեմ ապրել 'ի մեքենայիցս յայսմանէ, զի գիտասցէ թէ ես եմ Աստուած Աբրահամու և Սահակայ և Յակոբայ։ Եւ կալեալ Տէրն զձեռանէ Գէորգայ, ասելով. Ահա ձեռն որ ետեղծ զքեզ և զնախահայրն քո, նոյն ձեռն և այժմ ետեղծ զքեզ վերստին. և փչեաց յերեսս նորա. և անկաւ յաչաց նորա որպէս կեղևանք, և ետ նմա տէրն ողի կենդանի. և յետ այսորիկ ողջոյն ետ նմա Տէրն, և վերացաւ յերկինս հանդերձ հրեշտակօք իւրովք։

Յայնժամ յարուցեալ սուրբն Գէորգէոս շրջէր 'ի փողոցս քաղաքին խնդրելով զԴիոկղիտիանոս և ըզթագաւորս որ ընդ նմանոյն էին. և գտեալ զնոսա 'ի տեղւոջ ուր կային, և կացեալ առաջի նոցա՝ ասէր ազաղակելով. Ո՞անաչէս զիս, ով Դիոկղիտիանոս. և նա

1 Միւսն. Փողեաց Միքայէլ եղբէր փողոնն։

2 Միւսն. Միքայէլ. Գաբրիէլ և բազում հրեշտակք ընդ նմա։

ասէ. Ո՞վ ես դու։ Եւ սուրբն ասէ. Եւ եմ Պետրոս ծառայն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, որ 'ի քէն եղէ կատարեալ և ընկերեալ 'ի գործ. ընդէր թշնամանես զանուն Աստուծոյ խնդ։ Այսչափ Պիտղիտիանոս. Ուրեմն ստուէր նորա [1] լցէ. և Ադնիտինոս [2] ասէ. Հանրտապէս ասես որ ստուերն է նորա։ Իսկ սուրբն Պետրոս ասէ. Եւ եմ ծառայն Աստուծոյ Պետրոս։ Եւ տեսեալ Ադնիտիոս [3] աթոռակից թագաւորին զյոլով բազմութիւն ժողովրդեանն՝ որ հաւատացին 'ի Տէր, և տեսեալ զսուրբն Պետրոս թէ յարեաւ 'ի մեռելոց, հաւատաց ինքն ամենայն իշխանութեամբն իւրով։ Եւ տեսեալ թագաւորին թէ յոլով բազմութիւն հաւատացելոց մերձենային առ Աստուած, հրամայեաց զնոսա արտաքոյ քաղաքին հանել և սպանանել 'ի մարտի [4] անոյ 'ի ներ. և երթեալ հասին 'ի դրախտին խաղաղութեամբ։

Յետ այսորիկ հրամայեաց թագաւորն Պիտղիտիա նոս բերել մահիճն պղնձիս և հրացուցանել և զարդարն պրկել 'ի վերայ նորա. և հալեալ կապար, և երկաթով բացեալ զբերան երանելոյն, և արկեալ 'ի ներս զկապարն, և ոչ ինչ մերձեցաւ 'ի նա։ Եւ հրամայեաց բևեռս հարկանել 'ի գլուխս նորա, և կապարով պնդել, և քար մեծ քանդակեալ և դնել զայն 'ի վերայ գլխոյ նորա, և հանդերձ քարիւն խողխողեալ [4] զնա յերկար, որպէս զ'ի հոլովեն զնա բաժանեսցին անդամք յօդուածոց նորա։ Եւ իբրև զայս տանջանս արիաբար ընկալաւ, յետ այսորիկ հրամայեաց զնա գլխիվայր կախել և բևեռս հարկանել յոտս նորա. և կապեցին 'ի պա-

1 Միւսն. Ստուեր բռնամահին է։

2 Միւսն. Յետեալ Ադատաղու զբրավարի։

3 Միւսն. Փեգրուարի ԺԵ, յաւուր շաբաթու, Ինեերորդի (ԺՄՈ)։

4 Միւսն. Հոլովել։

բանոցն նորա քար մեծ. և ասա հրամայեաց առնել
եղն պղնձի, և արգելուլ՝ի նա զարդարն, և հարկանել
՝ի նա բևեռս որպէս զի հոսեսցի արիւն նորա իբրև
զփոշի. և հեղեալ արիւն նորա յոյժ։ Եւ իբրև զայս
վերս արիաբար ընկալաւ, հրամայեաց արկանել զնա՝ի
բանդ, մինչև զմնաւ ածիցէ թէ որպիսի տանջանաց
կորուսցէ զնա։

Իսկ Ցերն երևեցաւ նմա՝ի բանդին, և ասէ. Օգ
բացիր և քաջալերեա նահատակ իմ Գէորգիէ, քանզի
ուրախութիւն է յերկինս և յերկրի՝ի վերայ նահատա-
կութեանդ քո. քանզի միանգամ մեռար, և յարուցի
զքեզ. և արդ երկրորդ անգամ մեռանիս, և յարու-
ցից զքեզ. իսկ՝ի չորրորդումն՝ ես ինքնին եկից առ
քեզ անմոլորդ և հանգուցից զքեզ ընդ Աբրահամու և
ընդ Սահակայ և ընդ Յակոբայ։ Եւ վերացաւ Ցերն
յերկինս հանդերձ հրեշտակօքն իւրովք։ Իսկ սուրբն
Գէորգիոս անքուն կայր մինչև յառաւօտն։

Եւ իբրև այդ եղև՝ հրամայեաց բերել առաջի բե-
մին. և ասէ ցնա Թագաւորն Մեղնատիոս[2]. Գէոր-
գիէ, նշան խնդրեմք՝ի քէն, եթէ տացես մեզ՝ հաւա-
տասցեմէս Աստուածն քո. են առ մեզ աթոռք ջրեք-
տասանք իւրաքանչիւր՝ի նոցանէն ունելով տախտակ
պղաբանդս[3], թէ աղօթիւք քովք պղաբերին տախ-
տակքն՝ հաւատասցուք Աստուածն քո։ Իսկ սուրբն
Գէորգիոս ասէ. Ոչ վասն ձեր թագաւորացդ արարից
զայդ, այլ վասն մերձակայ ժողովրդեանդ. վասն զի ու-
նիմ բազում ոչխարս ընտրեալս՝ի գաւթէս յայսմանէ
տանել՝ի գաւթիս տեառն իմոյ։ Յայնժամ ծունր
եդեալ կայր յաղօթս. և կատարեալ զաղօթսն լիներ

1 Ա. յապէս յօր. Միւսն, յերրորդում. այլ պապմոնիանն լուրիս
Բոսէ Գեռանէլ արբոյն։

2 Միւսն. Մանգնենոիանոս։

3 Միւսն. Պողաբանդակս։

օրն ամպախառն [1], որպէս թէ ամենայն երկիր մթա-
նալ, և ամենայն լերանց շարժել. և ահա վաղվաղակի
հոգի Աստուծոյ էջ 'ի վերայ ջրերքտասան աթոռոցն, և
առժամայն արմատացան. և եցոյց սուրբն Պետրոս զեկեղեցոյն՝ որպէս պտղաբերս [2], և զպտղաբերսն՝ որ-
պէս զեկեղեցին։ Այլ տեսեալ թագաւորին զքանչելի-
լսին զարմանացաւ յոյժ, և ասէ. Մի՝ եթէ Աստուածն՝ որ
'ի ցամաքեալ փայտս զօրութիւն եցոյց։ Խորհէին թէ
որպէս կորուսցէն զնա։ Իսկ անօրէնն Պիղատոս
հրամայեաց սղոց բերել, և նովաւ սղոցել զսուրբն, և
այնպէս աւանդեաց զՀոգին իւր առ Աստուած. և հրա-
մայեաց բերել թանիր [3] մեծ, և զմարմին արդարոյն
ընկենուլ 'ի նա։ Այլ թանիրն վառեալ էր հրով սաստ-
կագոյն, որպէս զի բոց նորա ցոլացեալ էլանէր 'ի վեր
կանգնելոյ հնոցատանն [4]. և զհնուորացն ոչ կարացեալ
տանել զտոչորումն թանդրին, ազդեցին թագաւորին
թէ այրեցաւ թշուառականն այն ամենևին։ Հրա-
մայեաց զնա թաղել հանդերձ թանդրիւն, ասելով.
Պուտցէ եկեսցէ զբ 'ի քրիստոնէից, դողասցէ զնշխարս
նորա, և շինեսցէ վկայարան յանուն նորա, և եկեսցէ
արիւն նորա 'ի վերայ գլխոց մերոց։

Իսկ յորժամ գնացին ամենեքեան, էջ Տէր յերկ-
նից հանդերձ հրեշտակօք իւրովք սրբովք, և ասէ
ցԱղաթիէլ. Հրեշտակ ուխտի խնդ էջ ցրուեա [5]
զԹանիրն. և երթեալ Աղաթիէլ որպէս հրամայեաց
Տէրն, և երևեցաւ լոյս մեծ 'ի տեղւոջն յայնմիկ,
որպէս զի ոչ կարէին տեսողքն մերձենալ որ անդն

1 Միւսն. ամպախիտ օդ . . . թանալ ամենայն երկրի։

2 Միւսն. Զանպտուղն իբրև զանպտուղ, և զպտղաւորն իբրև զպտղաւոր։

3 Միւսն աստ և զկնի ունի Սան։

4 Միւսն. Ցոգեալ 'ի նմանէն շիթս 'ի կանգուտս հնոցատանս։

5 Միւսն. Էջ ցրուէ զսանն և զկաթուածն ընտրէ։

կային . և խօսեցաւ Տէրն , և ասէ . Այս եմ Աստուած՝ որ յարուցի զԱ՚ զարս , և քեզ ասեմ Պետրոսիէ , արի՛ ի քնոյ քումմէ : Իսկ սուրբն Պետրոսիէ զարթեաւ որպէս ՚ի քնոյ , որպէս թէ ոչ մի տանջանս կրեալ էր : Այլ տեսեալ զնա այնուհետև զինուորացն՝ ազդ արարին թագաւորին . Պետրոսիոս՝ զոր դուն արկեր ՚ի թոնիրն՝ ահա ուսուցանէ ՚ի քաղաքս հրապարակաւ : Յայնժամ զարմացեալ եւ թանասուն աթոռակալացն , և հրամայեցին յափշտակել զնա և ածել առաջի նոցա : Այլ ասէ թագաւորն Տրիանկելիանոս . Պետրոսիէ , ոչ գիտեմք եթէ նախանմանութեամբ ՚ աստուածոց մերոց աթոռքն ՚ի ծառ փոխեցան . այլ են առ մեզ գերեզմանք ՚ կախուցեալք , և ոչ ոք գիտէ ՚ի մարդկանէ զմնա և զել նոցա . և արդ եթէ աղօթիւք քովք յաւրիցեն ոսկերքն այնոքիկ , հաւատասցուք ՅԱստուածն քո : Իսկ սուրբն Պետրոսիոս ասէ . Ո՞չ լուարուք սուրբ աւետարանին որ ասէ . “Զոմն ասեմ ձեզ եթէ ունիցիք հաւատս քան զՀատ մանանխոյ և ասասջիք լերինս այս միոյ՝ թէ փոխեաց աստի , փոխեսցի , և ոչ ինչ տկարասցի ձեզ ,, . այլ երթ դու աթոռակալդ Տրանկելիանոս , և թագաւորդ Աղիպտացւոց [3] , և բացէք զձեղունս [4] վերնատանն , և բերէք առ իս յոսկերաց մեռելոցն , ապա թէ ոչ գտանէք յոսկերացն՝ ՚ի հողոյն բերիցէք [5] ինձ այսր : Այլ երթեալ թագաւորացն քերեցին ՚ի հողոյն և զոսկերքն , և առեալ զՀողն հանդերձ ոսկերօքն բերին առ ոտս սրբոյն Պետրոսիոյ : Իսկ սուրբն Պետրոս գէոս ծունր եդեալ աղօթեաց առ Տէր Աստուած , և

1 Միւսն . Նախանմանութեամբ Աստուծոյ քո թէ աստուածոց մերոց :

2 Միւսն . Գերեզմանս կոփածոյք :

3 Միւսն Ե- Մոգենենոիս :

4 Միւսն . Ի բաց առեալ զձողունս և այլն :

5 Միւսն . Զհողն քերեցէք և բերէք :

կատարեալ զաղօթեան եղև ամենախառն [1] օդն, որպէս թէ ամենայն երկիր մթանալ, և ամենայն լերանց շարժել. և փայլեաց փայլատակումն հրոյ 'ի տեղւոջն յայնմիկ, և յարեան 'ի հողոյն եւթն այր և կանայս ինն և մանկունս երիս։ Այլ տեսեալ զերեալ սքան-չելիսն զարմացաւ յոյժ Թագաւորն, և կոչեալ առ ինքն զմի 'ի նոցանէ և ասէ. Զ՞ինչ անուն է քո. և նա ասէ. Յոբոնիոս [2] կոչիմ։ և Թագաւորն ասէ. Վրանի՞ սմ ունիս յորմէ հետէ վախճանեցար. և Յոբոնիոս ասէ. Այրկերիւր սմ ունիմ աւելի կամ պա-կաս։ Թագաւորն ասէ. Քրիստոս եկեալ էր յայն-ժամն՝ եթէ ոչ. Յոբոնիոս ասէ. Այս զՔրիստոսէն յայնմ ժամանակին ոչ լուայ. և Թագաւորն ասէ. Պա զմի պաշտեցիր. և Յոբոնիոս ասէ. Մի հարկեր զիս, անչափ ասել. և նա ասէ. Պա. և ասէ. Պաշտեցի ըզ-կուռսն Պղծոյնի զկոյր և զխուլ և զանզգայ. և յոր-ժամ ելի 'ի կենցաղոյս յայսմանէ՝ քնակեցայ 'ի խորա-սոյզ տեղի, և էր 'ի վերայ իմ որդն անքուն, և հոսեր 'ի վերայ իմ գետ հրեղէն. իսկ որք ճանաչէին զՔրիս-տոս, թէպէտ և 'ի տեղի [3] ինչ էին, այլ յաւուր կիւ-րակէի հանգիստ ունէին [4]. իսկ մեք ոչ յաւուր կիւրա-կէի ունէաք հանգիստ՝ և ոչ յայլ օր։ Պա՛ս Թագաւորն. Զ՞առանցեալ ես, զի յառաջ քան զերկերիւր սմ վախճանեցար. և Յոբոնիոս ասէ. Ոչ եմ զառանցեալ, այլ զՀնմարիան խօսիմ. և ասէ. Զ՞որդ Հնմարտութեան Դէորգէոս սուրբդ Պ՛ստուծոյ ողորմեաց մեզ, և տուր մեզ զառ 'ի Քրիստոս զկեանսն, և առաքեա զմեզ 'ի դրախտն Պ՛ստուծոյ, և աղօթէ՛ վասն մեր, զի մի տես-

1 Միւսն առաջ Ամոխիի գրէ։

2 Միւսն. Յոբիոս։

3 Միւսն. Թէպէտ և 'ի մեղս ինչ էին։

4 Որպէս ամենայն տարագէպ հանգամանք պատմութեանս, նոյն-պէս ընդ անվաւերականս է և այս օտարալուր վարդապետութիւն։

ցուք զվիշան զայն յորում էաք։ Իսկ սուրբն Գէորգէոս իբրև ետես զհաւատս առնն, եհար ոտամբն՝ ըզվէմն երկրի, և բղխեաց ջուր բազում յոյժ, և մինչև տեաց զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և ասէ ցնոսա. Խաղաղութեամբ գնացէք ի դրախտն Աստուծոյ. և վաղվաղակի անհրաժեշտ եղէն, և այլ ոչ ոք ետես զնոսա։ Իսկ Թագաւորն Դիոկղետիանոս տեսեալ զիրսն, ասէ. Կախարդ է, և զև զոյ՝ ի նմա, և զևս էած առաջի մեր, և ասէ, Թէ՝ ի մեռելոց յարուցի, բայց ես դիտեմ թէ որպէս անարգեցից զաղջն Գալիլեացւոց. երթայք՝ ի քաղաքդ, և խնդրեցէք տուն մի տառապելոյ[1], և անդ բնակեցուցէք զդա՝ ի թշնամանս Գալիլեացւոց։ Այս առեալ այնուհետև զինուորացն տարան՝ ի տուն մի այրոյ։ Իսկ յորժամ դարձան, ասէ Գէորգիոս. Գնեզ ասեմ, կին դու, տուր ինձ հաց և կերայց, զի քաղցեալ եմ. և կինն ասէ. Ոչ կայ հաց՝ ի տան իմում։ Սուրբն Գէորգէոս ասէ. Օ՜ր աղանդ պաշտես. և կինն ասէ. Օ՜մեծ աստուածն Աստղն։ Սուրբն Գէորգէոս ասէ. Յիրաւի հաց չիք՝ ի տան քում. և կինն ասէ. Երթայց առ դրացիս, և բերից հաց առնս եկելոյս առ իս։ Այս ելեալ կինն գնաց՝ ի տանէ իւրմէ. և յարուցեալ սուրբն նստեր առ խարիսխ սեանն, և վաղվաղակի արմատացաւ սիւնն, և արձակեաց շառաւիղս, և եղև ծառ մեծ յոյժ, և բարձրացաւ քան զտանիս տանն հնգետասան կանգուն, և Աստուծոյն իւր լի ամենայն բարութեամբ։ Այս իբրև զարձաւ կինն և ետես զսիւնն արմատացեալ և զԱստուծոյն լի ամենայն բարութեամբ, եկն անկաւ առաջի նորա լալով, և ասէ. Աստուած քրիստոնէից, արա ողորմութիւն ազգի մարդկան։ Իսկ սուրբն Գէորգէոս ասէ. Ոչ եմ Աստուած քրիստոնէից, այլ

1 Միւսն. Վաղեաց՝ ի դէմս։

2 Միւսն. Տառապեալ այրոյ։

ծառայ նոցա [1] իցեմ։ Եւ այրին ասէ. Տէր իմ թէ գոյց ընդ հոգիս առաջի քո, խօսեցայց ընդ քեզ, մի արհամարհեր զաղախինս քո. ահա մանուկ իմ կայր ի տան իմում խուլ և անզգայ և անդամալոյծ, և է մանուկ ինն ամաց, և ամենեմ ցուցանել զնա դրացեաց իմոց, եթէ աղօթիւք քո առողջացուցանես զնա՝ մանուկն իմ և ես հաւատամ Աստուածն քո։ Եւ սուրբն Գէորգէոս ասէ. Ո՞ զնա այսր. և երթեալ հնոջն եբեր զմանուկն իւր յերկրորդ վերնատանէն, և ետ զնա առ ոտս սրբոյն Գէորգայ։ Իսկ սուրբն Գէորգէոս ասէ ցմանուկն. Արեզ ասեմ մանուկ դու, յարուցայ զքեզ տէր Յիսուս Քրիստոս. և փչեաց յերեսն, և անկաւ յաչաց նորա իբրև կեղևանք, և ասէ. Լուիցէ քեզ ականջք իւրովք. և ապա ասէ սուրբն Գէորգէոս ցկինն. Շատ է [2] քեզ այդ, մինչև ցվայր մի կացցէ այդպէս, պահեա ինձ զդա, և լուիցէ ինձ, և ոտիւք իւրովք գնասցէ, և սպասաւորեսցէ ինձ բանիւք։ Եւ ոչ հարցանել [3] այնուհետև զոք իշխեր ինչ, քանզի տեսանէին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի։ Եւ տեսեալ Թադաւորին Դիոկղետիանոսի զծառն բարձրացեալ քան զտանիս տանին հնգետասան կանգուն, զարմացաւ յոյժ, և ասէ ցսպասաւորսն. Պատմեցէք ինձ, զինչ է այս. և նոքա ասեն [4]. Կախարդ է, և խորհրդակից է Գալիլեացւոց։ Եւ հրամայեաց յարիշտակել և քերել առաջի իւր, և հարկանել զնա արքառաջքք, մինչև պատառեալ ամենայն մարմինն նորա. և հրամայեաց կախել և քերել մինչև

1 Միւսն. Առաքեալ եմ քրիստոնէից։

2 Միւսն. Ասէ կինն. Լուիցէ ականջք իւրովք և գնասցէ ոտիւքն։ Սուրբն ասէ առ կինն. Շատ են։

3 Միւսն. Ոչ իշխեաց կինն.. քանզի տեսաներ։

4 Միւսն. Նոքա ասեն. Խորհրդակիցն Գալիլեացւոց անդ բնակեալ է։

որովայն նորա հեղաւ. և հրամայեաց մերձեցուցանել 'ի նա կանթեղս հրոյ մինչև այրեցան անդամք նորա, և այնպէս վախճանեցաւ։ Այլ տեսեալ Թագաւորին եթէ մեռաւ, և ասէ ցզօրականսն իւր. Պռէք զսկերսդ դորա, և տարէք 'ի լեառն մի բարձր, զի թուչունք կերիցեն զմարմին դորա։ Այլ առեալ զօրականացն հանին 'ի լեառն մի բարձր, որ կոչէր Աղրիայ', և դարձան առ Թագաւորն։ Իսկ տերն իջեալ յարոյց զսուրբն ասելով. Բարի 'ի քնոյ քումմէ. և նորա յարուցեալ փութայր հասանել զօրականացն՝ ասելով. Մնացէք ինձ, զի և ես եկից առ Թագաւորն։ Յայնժամ տեսեալ զօրականացն եթէ կենդանացաւ Գէորգէոս, անկան 'ի վերայ երեսաց իւրեանց, աղաղակէին ասելով. Սուրբդ Գէորգէ ողորմեաց անձանց մերոց, և տուր մեզ զառ 'ի Վրիստոս կեանսն։ Իսկ սուրբն Գէորգէոս առեալ ջուր մկրտեաց զնոսա յանուն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն։ Այլ ժողովեաց Թագաւորն զամենայն զինուորսն առաջի բեմին. և իբրև եկին՝ աղաղակեցին ամենեքեան եթէ Վրիստոնեայք եմք. և տեսեալ Թագաւորին Գէորգիոսի զզարմանսն հրամայեաց զՎեղիկիոն[2] կախել գլխիվայր, իսկ զԱթինէ և զՄաղդիէն սրով սպանանել, իսկ զԱղիկոն հրամայեաց դարձեալ գաղանաց ձգել, և զսուրբ վկայն Քրիստուծոյ հրամայեաց 'ի բանդ արկանել, մինչև խորհեսցի Թէ որով մահուամբ կորուսցէ զնա։ Այլ 'ի վաղիւ անդր Գէորգէոսիանոս Թագաւորն նստեալ 'ի վերայ բեմին, և հրամայեաց ածել առաջի իւր զսուրբն Գէորգէոս, և ասէ. Այրդուեալ եմ 'ի Ճառագայթս[3] արեգականն, և եւթանասուն Թագակիցք և աստուածք Հնդիս պարգևեցին

1 Միւսն. Դիդրիա։

2 Միւսն. զԴիւզիկիոն.. զԱղադասէն և զՄասիադէն։

3 Միւսն. Եղդուեալ տերամբ արեգականն, եօթանասուն Թագաւորքն և աստուածովքն և մեծուրհեան Արտեմեայ։

Պրոտեմեաւ, եթէ լուիցես ձայնի իմում ոչ սակաւ ինչ հնարէցիս քեզ. այսուհետև ընդ իս իցես յարքունիսն իմ, և միայն զոհես աստուածոյն խոց Պպողոնի, և ըզ-հետ վախճանի իմում՝ նստիցիս յաթոռ իմ պատուական Թագաւորութեանս, և ունիցիս մեծ պատիւ յինէն։ Իսկ սուրբն Պետրոգէոս ասէ. Օ՜ այս բանս յա-ռաջնումն ոչ ասացեր ինձ որպէս զի հաւանեցուցանիցիր զիս. այլահա եւթն ամ ունիմ՝ի քէն չարչարել, և երիցս անգամ կատարեցայ՝ի քէն, և ոչ լուայ այս-պիսի բանս՝ի քէն. ո՞չ գիտես Թագաւոր եթէ ազգք քրիստոնէից դժուարամարտք են, և է երբէք զի ու-նիմ առնուլ վրէժս՝ի Թշնամեաց իմոց յայսցանէ։ Նա Պիսոկրետիանոս ասէ. Մի մեղադիր լիսիր ինձ, այլ գիտացիր զի յետ իմ Թագաւորելոց ես դու. և սուրբն Պետրոգէոս ասէ. Հաւանեցուցեր զիս զոհել աստուածոց քոց. այլ վասն զի երեկոյ է, հրամայեա պնտել՝ի կոձեղ զիս, և առաւօտուն երթամ զոհեմ Պպողոնի։ Իսկ Թագաւորն ասէ. Մի լիցի ինձ որդեակ զայդ առնել, այլ առաւել Թողութիւն հնարէա ինձ վասն առաջին տանջանացն, և մնատ՝ի ներքսագոյն արքունիսն հանգիր. և ընթացեալ զի համբուրեսցէ ըզ-գլուխ արքոյն։ Իսկ սուրբն Պետրոգէոս ոչ հաւանեցաւ, ասէ. Ոչ պարտ Պաղիլեացւոց համբոյր ընդունել՝ի ձէնջ, եթէ ոչ նախ մատուցեալ զոհեսցէ աստուածոց ձերոց։ Յայնժամ Թագաւորն հրամայեաց տանել զնա՝ի ներքսագոյն արքունիսն։ Իսկ սուրբն Պետրոգէոս մնեալ սաղմոսէր ասելով. "Ովք Պստուած մեծ որպէս զՊստուած մեր, դու ես Պստուած՝ որ առնես զքաջութիւնս միայն,,. և դարձեալ. "Պնդէր խոռվեցան հեթանոսք և ժողովուրդք խորհեցան՝ի մտոտիս. յանդիմանն եղէն Թագաւորք երկրի և իշխանք վասն տեառն և վասն օծելոյ նորա,,։ Նա յաղթեալ նորա՝ այսպէս սաղմոսէր մինչև վճարել զաղօթսն. և յետ այսորիկ ասէ ցնա Թագուհին Պղեքսանդրիա. Տէր Պետրոգէ, զի՞նչ է

որ ժողովեցան, և կամ ո՞վ է որ խոովեցան 'ի մոտիս, կամ ո՞վ է օձեալն. պատմեա ինձ տէր, քանզի հեշտաբար լսեմ քեզ։ Յայնժամ բացեալ զբերան իւր սուրբն Պետրոս ասէլով. Յորժամ արար Աստուած զերկինս և զերկիր, հող էառ յերկրէ և եստեղծ զմարդն՝ փութացեալ կենդանոյն Աստուծոյ, վասն որոյ երկինք ձգեցան, և երկիրս հիմնեցաւ, արեգակն փայլեաց և երկիրս նորոգեցաւ, և լուսին պայծառացաւ, և տարերքք կերպարանեցան։ Բայց ինձ զայս ասա, ով Թադուհի՝, յաղագս որդւոյն Աստուծոյ, թէ զիարդ մարդ եղև։ Ասէ ցսուրբն Թադուհին. Տէր իմ ասա դու ինձ թէ զիարդ եկն Քրիստոս յերկնից։ Սուրբն Պետրոս ասէ. Վասն զի յամենայն երկիր դևք երկրպագեին, և Աստուած թշնամանեալ լինէր։ Եւ Թադուհին ասէ. Այդ աստուածքն մեր ուրեմն դևք էին։ Սուրբն Պետրոս ասէ. Այո դևք են։ Թադուհին ասէ. Տէր իմ, ապա Քրիստոս զիարդ եղև մարդ։ Սուրբն Պետրոս ասէ. Լուր Թադուհի ասելոյն. "Որ նստիս 'ի վերայ քերովբէից, յայտնեա զզօրութիւնս քո, և եկ 'ի կեցուցանել զմեզ". այսպէս մարգարէացաւ Հոգին սուրբ և ասաց զՔրիստոսէ։ Դարձեալ ասէ. "Լայցէ որպէս զանձրև 'ի վերայ գեղման, որպէս ցօղ զի ցողէ յերկիր". և գեղմ զԱրիամ ասէ։ Եւ մարգարէն Աստուածամ ասէ. "Տէր զլուր քո լուայ և երկեայ, տեր նայեցայ 'ի գործս քո և զարհուրեցայ"։ Թադուհին ասէ. Ո՞ երբ լուաւ Աստուածամ, և զարհուրեցաւ։ Ասէ ցնա սուրբն Պետրոս. Պատրաստա բար ասաց մարգարէն զի լուաւ եթէ գայ Քրիստոս, և երկեաւ. խնայաւ և ետես զնա եթէ ընդ մարդկան շրջելոց էր, և զարհուրեցաւ։ Ասէ Թադուհին. Ո՞ՀՄարդ տասէս տեր իմ բարւոք ասես, և հեշտաբար լսեմ քեզ, այլ աղօթեա վասն իմ, և փախիցէ յինէն մոլ-

1 Միւսն. Բայց ինձ զայս ասելով Թադուհին։

րութիւն կոչին։ Այսպէս սուրբն Պէտրոգէոս. Հաւատա՛ի խաչելեալն Քրիստոս Աստուած, և ոչ տիրեսցեն քեզ մոլորութիւնք կռոցն։ Թագաւորին ասէ. Հաւատամ տէր, այլ՛ի Թագաւորէն երկնչիմ, զի պեղծ է և մոլորակեր. բայց սակայն կալցես առ քեզ զիմաստուրս իմ, մինչև հասիս քեզ՛ի գաւիթս Յեսուսն քո. և հրաւիրեսցես ինձ սակաւիկ մի հնչել, և հրամայեսցես նմա։ Այս ինքն ծուռը կրկնեալ աղօթէր մինչև ցառաւօտն։

Այս առաւօտուն հրամայեաց Թագաւորն երթալ՛ի տաճարն Աստուծոյ։ Այս ասէ ցնա սուրբն Պէտրոգէոս. Լուր Թագաւոր. առաջի Թագաւորութեանդ քո մեծ քննութիւն պարտ է լինել՝. նիստ դու յարքունիդ, և ես հանդերձ քրմապետօք երթիցուք՛ի տաճար կռոցն, և զոհեցից նոցա։ Այս քարոզէն աղաղակէին զօրութեամբ, և ասէին. Յաղագս մարդիկ ընթացարուք. ահա խորհրդակից գալիլեացւոյն Յիսուսի՝ մերձենայ զոհել մեծին Աստուծոյ։ Այս լուաւ այրն՝ որոյ որդին լուսաւորեցաւ զաղաղակ քարոզին, արձակեալ զՀերոս՝ իւր, և առեալ զորդին իւր կացոյց առաջի բազմութեանն, և ասէ. Պէտրոգէէ, որ զմեռեալսն յարուցեր և կուրաց հնարհեցեր տեսանել, որ զչոր փայտս ցամաքեալս պտղաբերս ցուցեր և զսիւն տան իմոյ արմատացուցեր, որ բիւր ուղղութիւնս արարեր ընդդէմ սատանայի, արդ մերձենամ զոհել Աստուծոյ։ Ծիծաղեցաւ սուրբն Պէտրոգէոս, և ասէ. Ի բաց արձակէ զմանուկդ՛ի գրկաց քոց։ Այս ձայնեալ սուրբն մանկանն ասէ. Մանուկ դու եկ յանուն Յիսուսի Քրիստոսի՝ որ լուսաւորեաց զիսաւարն՝ի քէն, և սպասաւորեա ինձ բանիւք։ Այս վազեաց՛ի գրկացն մանուէն, և եկն առ վկայն Քրիստոսի, և համբուրեաց զոտս նորա։

1 Միւսն. Առաջի իմոյ Թագաւորին քննութիւն լինի. ոչչափ ևս առաւել այսչափեացս աւելագոյն ևս պարտ է լինել։

2 Միւսն. Զոտս իւր։

Եւ ասէ ցնա սուրբն Պետրոս. Արեզ ասեմ մանուկ, մուտ 'ի տաճարն Աստուծոյ, և ասա ընդ դևսն՝ եթէ եղէք արտաքս, քանզի կոչէ զձեզ սուրբն Պետրոս։

Իսկ հոգին պիղծ՝ որ 'ի նմա կայր՝ աղաղակեաց ասելով. Ո՛վ Յիսուս Նազովրեցի, զամենեսեան 'ի քեզ կորզելով ձգեցեր յինէն, և փայտ քո կանգնեցաւ ընդդէմ մեր։ Եւ եղեալ դևն փութապէս զհետ մանկանն, և եկն առաջի սրբոյն Պետրոսի։ Ասէ ցնա սուրբն Պետրոս. Պա՞ւ ես աստուած հեթանոսաց։ Հոգին պիղծ ասէ. Ո՞չ ճանաչես զիս Պետրոսիկ, սակաւիկ մի մնա ինձ և ես պատմեցից քեզ։ Ասէ սուրբն. Խօսեաց։ Ասէ դևն. Յորժամ կախեաց Աստուած զերկինս և հիմնեցոյց զերկիր, տնկեաց զդրախտն, խորհեցաւ Աստուած և ասէ. Բրասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան. Եջ'ի դրախտն, և առեալ հող յերկրէ ստեղծ զմարդն, և ասէ ցմեզ ցհրեշտակս. Լցրկիր պատէք գործոց ձեռաց իմոց. և վաղվաղակի եկն Միքայէլ գնդաւ իւրով և երկիր եպագ. իսկ ես ընդդիմաբանեցի առ արդար դատաւորն ասելով, զի Նախ ես ստեղծայ, և արդ երկի՞ր պագանեմ նուաստագունին քան զիս. Ոչ արարից զայդ։ Յայնժամ բարկացեալ Աստուած արտաքսեցոյց զիս 'ի փառաց իմոց, և վայրաբերեալ եղէ իբրև զարծուի 'ի վերայ վիմի, և խորասոյզ եղէ. և Նստիմ այժմ 'ի վերայ կոտոց այսոցիկ, և գործեմ զայս ինչ. Ելանեմ մինչև յերկինս, և դնեմ զունկն իմ, և լսեմ զվճիռն՝ որ ելանէ 'ի վերայ մարդոյն, և յառաջեմ նեղեմ զնա. և բազում անգամ երթամ յեկեղեցի Աստուծոյ, և զունկն իմ դնեմ առաջի դրան տաճարին Աստուծոյ. և յորժամ քահանայն որոշէ զոք յեկեղեցւոյն՝ առնում զնա առ իս, և եթէ կամեսցէ չընդունել զնա, զայն ինձ համարիմ. և այլ ինչ բազում

1 Միւսն ասա և զնմի՝ պոռէր ասէ փոխանակ դեւի։

գայթակղութիւն առնեմ։ Պսկ ցնա սուրբն Պետրոս ասէս. Թշուառական այս պիղծ, գնեց դու ինքն որոշեցեր քոյին կամաւորութեամբդ. ընդէր զանձինս քրիստոնէից կորուսանես։ Իսկ հոգին պիղծ ասէ. Լրդուեալ եմ 'ի յիւթն հաստատութիւն երկնից, ութ և տան թերթիւք և վարսիւք արեգակամբն և եղջերիւք լուսնի, որ եթէ ունէի իշխանութիւն՝ գքո անձդ կորուսանէի։ Պսկ ցնա սուրբն Պետրոս. Թշուառական, և ինձ պարապեցեր. ընկալ դու զայս տուհատն քո։ Լոյս եհար սուրբն ոտամբն զերկիր, և ընկրկեցաւ ոգին պիղծ 'ի սանդարամետս դժոխոց մինչև 'ի վայր, և ինքեաց սուրբն զտեղին. և եմուտ սուրբն 'ի տաճարն Պպողնի, և ասէ. Փախերուք աստուածք հեթանոսաց, զի բարկութեամբ եկի առ ձեզ։ Լոյս տեսեալ քրմացն զկորուստ աստուածոցն իւրեանց, ասէ ցնա Թագաւորն Պիոկղիտիանոս. Լրէկ ոչ յանձն առեր առաջի իմ զոհել աստուածոցն խոց. արդ ընդէր փոխանակ զոհելոյ նոցա և ինդրուկ մնասուցանելոյ՝ զայդ արարեր նոցա. ոչ գիտես եթէ արիւն քո ընդ հզօր ձեռամբ խմիլ է։ Պսկ սուրբն Պետրոս. Լա զոր ինչ աստուածոցն քո զոհելոյ էր՝ զոհեցի. և եթէ ոչ հաւատաս ինձ, ով Թագաւոր, երթ ած ինձ զՊպողն, և քո առաջի զոհեցից նմա։ Պսկ ցնա Թագաւորն. Լուայ 'ի քրմացն, ով չարագործ չարազլուխ, եթէ 'ի տարտարոս դժոխոց առաքեցեր զնոսա, և զիս կամիս խորասցել առնել։ Իսկ սուրբն Պետրոս ասէ. Թշուառական, եթէ իւրեանց ոչ կարացին օգնել այժմ աստուածքն քո, իսկ յորժամ եկեսցէ տէրն 'ի մեծի և յահագին աւուրն փոփոխել զերկինս և զերկիր, զինչ գործիցեն աստուածքն քո։

Յայնժամ Թագաւորն պատառեաց զծիրանին իւր, և եմուտ 'ի նեռքսազոյն արքունին, ուր Թագուհին Պզեկսանդրիա էր, և ասէ. Զանձրացեալ եմ Պալիլեացւոց աղաւդ։ Պսկ Թագուհին. Ո՞չ ասացի քեզ 'ի

բաց կաց յապգէն քրիստոնէից, քանզի մեծ է Աստուած նոցա, որ և զբեզ ունի լուծանել յամբարշտութենէդ քումմէ։ Այսչ ցնա Թագաւորն։ Զեկանդրիա, և 'ի քեզ հասին մոգութիւնք քրիստոնէիցն։ Կալեալ զձեռանէ նորա եհան արտաքս, և պատմեաց ամենեցուն զոր ասաց նմա Զեկանդրիա Թագուհին, և հրամայեաց զհերաց նորա կախել և քերել։ Իսկ նա 'ի չարչարելն ոչ խօսէր, այլ զաչն յերկինս ունելով աղօթէր։ Այսչ ցնա սուրբն Գէորգէոս. Փոքր ինչ համբերեա Զեկանդրիա, և առնուս զպսակն 'ի Քրիստոսէ Աստուծոյ։

Եւ հրամայեաց զնա իջուցանել. և բերեալ մամուլս մեծ և բացեալ զբերան նորա, և եդեալ ուր 'ստինս նորա և զիսամծեծքն պնդեցին ուժգին մամլովքն։ Եւ համբերեալ սրբոյն քաջութեամբ բառնալով զցաւսն, և հայեցեալ 'ի սուրբն Գէորգէոս, ասէ. Օ՜ ինչ գոր ծեցից սուրբդ Աստուծոյ, զի ոչ ևս ընկալեալ եմ մկրտութիւն. ահաւասիկ պակասեմ, զիարդ բացցէ ինձ դռնապանն զդուռնն արքայութեանն։ Այսչ սուրբն Գէորգէոս. Գնա ուրախութեամբ, քանզի ունիս կնիքս 'ի ձեռն արեանդ։ Եւ նստեալ Թագաւորն Դիոկղիտիանոս յատենի, գրեաց վճիռ 'ի վերայ նորա։ Իսկ նորա առեալ զվճիռն, ասէ ցնոսա որ ունէին զնա. Համբերեցէք վայր մի՝ զի և ես հայեցայց 'ի վերնատունն արքունեացն. աղաղակեաց և ասէ. Տէր Յիսուս Քրիստոս մի փակեր զդուռն զրախտին քո ընդդէմ իմ, այլ բաց ինձ զնա։ Եւ հանեալ զարքունին Զեկանդրիա արտաքոյ քաղաքին, և կատարեցաւ սրով յապրիլի 'ի քան [2], յաւուր շաբաթու յերրորդ ժամու, և եհան խաղաղութեամբ յարքայութիւն զրախտին Աստուծոյ բարեխօսելով վասն մեր։

1 Միւսն. Բերել մամուլս մեծ, և բացեալ զբերանն՝ եդ զսինսն։
2 Միւսն. Յամսեանն ապրիլ ԺԷ։

Իսկ Թագաւորն կոչեալ զսուրբն Գէորգէոս , և ասէ . Գէորգիէ , ահա զԹագուհին կորուսեր , և արդ վասն մեր պարապեա : Ասէ ոմն 'ի Թագաւորացն . Հանցուք վՀիռ 'ի վերայ դորա : Եւ նստեալ Թագաւորն Գիոկղետիանոս գրեաց վՀիռ մահու , ասելով . Գէորգէոս՝ որ 'ի Գալիլեացւոց ' ոչ կամիցայ կռոցն զոհել , վասն այսորիկ հրամայեմք 'ի սուր մատնել . գիտացէք այսուհետև ամենայն ժողովուրդք զի անպարտ եմ ես յարէնէ դորա : Եւ առեալ ջուր լուաց զձեռն իւր : Եւ գրեաց Թագաւորն Իգնատիոս , և Թագաւորն Տրանգիլլիանոս , և Թագաւորն Եգիպտացւոց , և այլք 'ի Թագաւորացն :

Իսկ սուրբն Գէորգէոս առեալ զվՀիռ մահուն փութայր երթալ յասպարէզն . և յորժամ էլ յարքունեացն , էլ 'ի դուռն երկաթի՝ որ մուծանէր 'ի քաղաքն . և յորժամ զմի ոտն 'ի դուրսն ունէր և զմիւսն 'ի ներքսն , ասէ ցզօրականսն որ տանէին զնա . Դղեարք , անասայցէք ինձ փոքր մի , քանզի ահա եւթն տարի ունիմ չարչարել 'ի Թագաւորացս յայսցանէ . Թոյլ տուք զի աղօթք իմ ընդհատցին նոցա : Եւ ասէ . Տէր Աստուած , որ առաքեցեր զՀուրն զայն 'ի ձեռն Դղեայն մարգարէին , և եկեր զՀարիւր զօրականսն և զերկու յիսնապետսն , ինձէ հուր , և կերիցէ զիւթանասուն Թագաւորսն և մի ինացսէ 'ի նոցանէ [2] : Եւ նոյնժամայն անկաւ հուր յերկնից 'ի Տեառնէ , և եկեր զԹագաւորսն և զզաւրսն 'ի նոցանէ 'ի հեթանոսացն :

Եւ յորժամ եկին 'ի նշանաւոր տեղիս , ասէ սուրբն Գէորգէոս ցունողն իւր . Մնացէք ինձ փոքր մի , զի 'ի Թագաւորացն չարչարեալ եմ վասն անուանն Աստուծոյ , մնացէք ինձ զի Թողից ազգաց մնացելոց զաղօթս , զի

1 Միւսն . զԳէորգէոս զԳալիլեացւոց մարտակուսն :

2 Միւսն չունի ոչ զնեղրուածն և ոչ զպատմութիւն հրակէզ կորստեանս , համառօտեալ և զհետագայս :

տեսանեմ զայս բազմութիւնս, մի գուցէ մարմին իմ ոչ բաւէ աշխարհիս. և հայեցեալ յերկինս սուրբն Պետրոս գէաս, ասէ. Տէր Աստուած որ զպատկերն ոսկի փշրեցեր, և զանգգամ թագաւորն 'ի մարդկանէ հալածեցեր, և ընդ գազանս զբաժին նորա եդիր մինչև եւթն ժամանակ փոխեցաւ 'ի վերայ նորա, և յորժամ ծանեաւ եթէ դու ես Աստուած երկնի և երկրի և ամենայն արարածոց. հայեցեալ վաղվաղակի 'ի խոնարհութիւն ծառայից քոց տուր ինձ զինդրուածս իմ, քանզի բազումք սպասեալ կան առնուլ 'ի մարմնոյ իմոյ ընդհանս յերկրի, զի ամենայն մարդ որ եղիցի 'ի քոյն զարհուրանաց և յիշեսցէ զանուն իմ՝ եղիցէ նմա բարի. Տէր տուր մարմնոյ և անուան իմոյ ընդհանս, զի եթէ ոք ըմբռնեսցի յահագին դատաստան և յիշեսցէ զանուն իմ, ելցէ առանց դատապարտութեան յամենայն վտանգէ։ Տէր Աստուած, տուր մարմնոյ և անուան իմոյ ընդհանս, զի եթէ ոք ըմբռնեսցի յորոգայթ ինչ, և յիշեսցէ զոր մահու կատարման իմոյ, մի լիցի նմա չար։ Եւ յորժամ դա դարեաց յաղօթելոյ, ահա Տէրն եհաս առ նա, և ասէ. Եկ ծառայ իմ սիրելի, և ամբարձիր 'ի բարձրութիւն հօր քո, ուր տուրքն պատուականքն են, և պսակք անթառամք, և կեանք երկնային։ Յանձն իմ երդնում զի ամենայն որ արժանաւորի մարմնոյ քո՝ ասրեսցի. գիտեմ զի ամենայն մարմին և արիւն, այսինքն ամենայն մարդ որ լինիցի 'ի վտանգի, 'ի դատաստանի, 'ի գետ, կամ 'ի ծով, և յիշեսցէ զանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ և զանուն սրբոյն Պետրոսեայ, փրկեսցի մարդն այն յամենայն վտանգէ։

Եւ յորժամ դադարեաց Տէրն 'ի խօսելոյ, վերացաւ 'ի նմանէ յերկինս, տալով նմա զամենայն խնդրուածս նորա. և ասէ ցգլխատողն. Եկայք կատարեցէք ըզհրամայեալն ձեզ։ Եւ մատուցեալ յառաջ հատին զգլուխ բարեյաղթ վկային Քրիստոսի. և ելեալ ջուր և արիւն 'ի պարանոցէ նորա. և եղև շարժումն մեծ,

և փայլատակունք և անձրևաց բազմութիւնք՝ որպէս զի ոչ կարէին տեսանել մերձակայ ժողովուրդն. և եղև ահ մեծ 'ի վերայ նոցա, և բազումք հաւատացին 'ի Տէր։

Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի Գէորգէոս 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր յապրիլի ամսոյ ԺԷ. և է մեզ բարեխօս և օգնական ամենայն հաւատացելոց Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որում վայելէ փառք պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն։

ՏԵՍԻԼ

ՄԵԾ ԵՒ ՓԱՌԱՒՈՐԵԱԼ

ՉՕՐԵՎԵՐԻՆ

ԳԼՈՐԳԵՑ ՎԿԵՑԻՆ

ԶՈՐ ԵՏԵՍ Ի ԼԵՐԻՆ ԱՂԱՆՈՑ

Աշխարհէք զայս մնաց ձերոց և տեսէք նոր սքանչելիս զոր եղեն յաւուրս մեր, և 'ի միտ առէք զԱստուծոյ մարդասիրութիւն, և փառս տացուք անուան նորա։ Նկայք ամենեքեան ոյք երկնչիք զԱստուծոյ և պատմեսցուք ձեզ։ Լուարուք զսոսկալի խորհուրդս և զահագին իրս զամենայնափառս մեծ վիպային Գէորգայ, զոր ինչ է տեսին զյայտնեցեալն նմա, զփառս և զշնչանն. քանզի պահեալ էր նմա զաւուրս քառասուն. և սկսաւ աղաչանօք խնդրել զԱստուծոյ աղօթելով այսպէս. "Զսակիզբն և անտեսանելի կենդանասկզբնական Աստուած ամենակալ, որ ոչ սկիզբն ունելով և ոչ կատարած. որ վասն մեր անչափ մարդասիրութեան քո երևեցար ծառային քում Գեորգի 'ի լերին Ամենեայ, նայեա և յիս 'ի ծառայս քո, և եթէ իցեմ արժանի աղքայութեանդ քո, յայտնեա զքեզ ինձ ինք-

նին ամենայն զօրօք քո, զի ծանեայ եթէ դու միայն ես Աստուած 'ի վերայ ամենայն տիեզերաց ։

Այս աղօթելով սրբոյն Գէորգայ, զբառասուն օր անսուաղ պահելով, ոչ անպակաս արար զնա յաւիտենական թագաւորն, և ոչ արհամարհեաց զինդրուածս նորա, այլ գթացաւ 'ի նա ։ Իսկ 'ի լսելն քառասներորդ աւուրն 'ի տեսլեան գիշերոյ եկն հրեշտակն Աստուծոյ, և ասէ ցԳէորգիէ. "Լսելի եղէն աղօթք քո, և ահա կատարեսցին ինդրուածք քո. կանխեա առ իս ընդ առաւօտն 'ի լեառն Աղանոյ, և տեսցես զոր հայցեցեր, զի ծանիցես զի ես ընդ քեզ եմ,, ։ Իսկ ես լուայ զայսոսիկ 'ի հրեշտակէն, եւ ըստ բանի նորա 'ի լեառն Աղանոյ սաղմոսելով զբանս Դաւթի. "Ոչ նապարհս իմ ուղիղ արա ինձ Ցեր ըստ բանի քում, և մի տիրեսցեն ինձ ամենայն մեղք իմ,, ։ Այս ասացեալ իմ, և առաւել քան զսոյնս, և ահա ելեալ յարևելից փայլակն՝ հրոյ նման, և եկն մերձ իմ. և իմ զահի հարեալ նկատել՝ հայեցայ եթէ ուստի իցէ հուրս այս ։ Այլ տեսանէի ահա անսիւք ջրոք 'ի նմանութիւն ոսկւոյ, և բազում ժողովրդոց գեր 'ի վերայ անուոցն, գայլն բազմութիւնք և պաշտէին, Փառք 'ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն և 'ի մարդիկ հաճութիւն. և եկին մերձ իմ, և վաղվաղակի դադարեցին ։ Այլ իմ մտախորհ եղեալ յերկիւղէն եթէ զինչ իցէ այս, և ահա լուայ ձայն զրոտման սաստիկ բռնութեամբ յարևմտից. և իմ յահէ պշուցեալ հայեցայ դէմ ընդ յարևմուտս, և եթէ զինչ իցէ ձայնն այն ։ Այլ տեսի վեց անիւս նման անուոց առաջնոցն, և բազմութիւն ժողովրդոցն 'ի վերայ նոցա անվայելուչ և անձև, ոսկեզգեաց ոսկեզգոյնս, և պաշտէին զնա նոքա, Սուրբ Աստուած սուրբ և հզօր, սուրբ և անմահ. եկին և նոքա զհետ այլոցն ։ Այլ յանկարծակի եկն ձայն 'ի հիւսիսոյ. նկատեալ տեսանեմ երկոտասան անիւս 'ի նմանութիւն այլոցն և բազմութիւնք ժողովրդոց 'ի

վերայ նոցա . և ձայնս ահագինս արձակէին , և սաղմոս երգութիւնս նոցա գեր 'ի վերոյ է քան զմիտս և ըզխորհուրդս և զհոգիս , քանզի ոչ գիտէի թէ զինչ խօսէին : Այլ իմ զարմացեալ եղեալ վասն այնոցիկ , նայեցայ ընդ հարաւ . և ահա ջրոյ անիւք եղեալ գային բռնութեամբ , և բազմութիւնք ժողովրդոց 'ի վերայ նոցա , և նոքա պաշտէին , " Միայն սուրբ միայն Տէր Յիսուս Քրիստոս որ գալոց ես ,, :

Ո՞վ լուսաւ յաւիտենից այսպիսի զարմանազան սքանչելիք , կամ ո՞վ ետես այսպիսի փառս 'ի մարդկանէ : Օ Յովհան դովասանելոյ զմեծ մարտիրոսդ Գէորգիէ , հնո՞ւն եթէ նորոյս : Այսայիս մեծն 'ի մարգարէս ուսնէլեօքն ինքնին 'ի շրթունս իւր զաստուածային կայծակն ընկալաւ : Իսկ դու ո՞վ ամենաբջանիկդ Գէորգիէ բոլորովին զօրացար 'ի Հոգւոյն սրբոյ : Դանիէլ դարձեալ աւ գետս Քոբար , ետես աթոռս և հինաւուրցն 'ի վերայ նորա նստեալ , և հազարք հազարաց պաշտէին զնա : Իսկ դու , ամենապատուական Գէորգիէ , ոչ միայն ըզհազարս հազարաց տեսեր , այլ զբիւրս բիւրոց և զթագաւորն փառաց հանդերձ երկնաւոր զօրօքն զեմ յանդիման , և զկենդանական անարատ ձայն նորա լուար , և Հոգւոյն սրբոյ տեսարան եղեր : Ի՞նչ գովեցից զքեզ մեծ մարտիրոսդ Գէորգիէ . առաքեալն՝ Տարսոնացի փողն Պօղոս , ընտրեալ անօթն Յիսուսոյ , զի զնա յսփրշտակեաց 'ի դրախտն , և լուեալ զբանս անՀաս որ և ոչ ինչ զօրեաց պատմել : Իսկ դու , ո՞վ երջանիկդ Գէորգիէ , զահագին դասն տեսեր զերկնաւորացն , և հայեցար 'ի զօրս և զփառսն նորա պատմեցեր : Ի՞նչ գովեցից զքեզ մեծ վկայդ Քրիստոսի Գէորգիէ , եթէ ոչ նախավկայն սուրբն Մատթէոս որ քարկոծողին իւրոյ հայցեր զթողութիւն , Տեառն իւրում նմանեալն , նա յաւանդել զՀոգին ետես զերկինս բացեալ և զՄրդին Յիսուսոյ կացեալ ընդ աջմէ Հօր : Իսկ դու , ո՞վ Գէորգիէ , ոչ միայն զՄրդին Յիսուսոյ , այլ զՀայր և զՀոգին սուրբ ։

Որպէս գովեցից զքեզ մեծ զօրական. ոչ ևս գտանեմ գովութեան արժանաւորս գովել զբազմաչարչար նահատակդ, զՀանապարհորդ առաքինագործդ վկայիցդ, ընտրեալդ Յիսուծոյ խօսակից եղեր Մովսէսի և քաղաքացի հրեշտակաց, որ և զրեցար յանմահական գիրսն և առեր իշխանութիւն կապել և արձակել։

Այլ եկն անարատ և կենդանասկզբնական ձայնն Յիսուծոյ որ ասէր ցիս. «Այն որ խղեաց զկապանս մահու և մթացուցանէր զբանսարկուն, և զԱդամ վերստին նորոգէր, ասէ ցիս. Պետրոսիկ, ահա ինձի յերկնից վասն քո և կատարեցի զմնդրուածս քո, բայց զերեսս իմ՝ ոչ կարես տեսանել. քանզի 'ի մարդկանէ ոչ ոք ետես զերեսս իմ և կարիցէ ապրել։ Այլ եղիցի այս քեզ նշան, ծածկեսցէ զքեզ աջ իմ և եղից զոգի իմ 'ի վերայ քո, և եղիցիս առաջի թագաւորութեանս իմոյ, և զոր կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակես 'ի յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս. և զոր ինչ խնդրեսցես յանուն իմ՝ տաց քեզ. և եղիցի անուն քո գրեալ յանմահական գիրսն, ուր և աշակերտքն իմ եղիցին, և դու յաղագս իմ վրկայեսցես, եթէ ես ընդ քեզ եմ։ Այրիցս սպանանէն զքեզ և յարուցանեմ. և եղից զքեզ 'ի ցնծութիւն հեթանոսաց, և եղիցիս դու մեծ և անուանի 'ի ծագաց մինչ 'ի ծագս տիեզերաց. և սիրեցի զքեզ որպէս զԱբրահամ և զԻսահակ և զՅակոբ, ուր և իցես դու՝ անդ և ես ընդ քեզ եմ. երթ 'ի խաղաղութիւն ընտրեալդ թագաւորութեանս իմոյ, երթ 'ի յերկիրդ զոր կոխես, և յետոյ անդրէն մոցես յարքայութիւն իմ յանփոխադրելին և յանմահն։ Այս ասաց Տէրն վերացաւ յերկինս, և ես յարուցեալ ոչ զոք տեսի։

Ապ ահագին իրացս և աքանչելեացս զոր արար տէրն ընդ ծառայն իւր Պետրոսիկ։

Այլ առ ժամայն եկն առ իս մի 'ի սերովբէիցն,

կոչեաց զանուն իմ և ասէ. Պետրոսի, կամիս ուսանել զոր տեսեր. եկի ես յայտնել քեզ զայն։

Զորեսին անիւքն, զոր տեսեր եկեալ յարևելից կողմանէ սոսկալի սերովբէքն իցեն. և որք յարևմտից՝ սուրբ քերովբէքն իցեն. և զորս 'ի հիւսիսոյ տեսեր փառաւոր վեցթևանքն իցեն. և զորս 'ի հարաւս նկատեալ տեսեր ՇԺ բազմակուանքն իցեն. և ՇԺ ա-թոռքն որ 'ի վերայ ամպոց էին, ՇԺ առաքեալքն էին Փրկչին, որք հանդերձեալ են դատել զտիեզերս ամենայն։ Այս ոսկեղէն անօթն զոր տեսեր լցեալ ամենայն անուշահոտութեամբն, Հոգին սուրբ է. և ամբն որ ունէր բազմութիւն հրեշտակացն, Որդին Աստուծոյ է. և չորեսին սիւնքն հայրապետքն իցեն, և ամբն ահագին որ 'ի վերայ նոցա՝ Տէրն ինքնին է որ խօսեցաւն ընդ քեզ։ Այրթ 'ի խաղաղութիւն սիրեցեալդ և ընտրեալդ 'ի Տեառնէ որ լուսաւորեցար առ 'ի Աստուծոյ։

Ովսաննէ՛ լեռացս սքանչելիքս, որպէս բարւոք խորհրդ-զահան Պրիստոսի, քրիստոնէից կարմանջ որ ածեալ տանիս 'ի կեանս անմահ. որ ես օգնական որոց իցեն 'ի նեղութեան. որ ես արագ ազատիչ մեղաւորաց. որ ես գերելոց ազատիչ և զերծուցիչ. որ ես ծփելոց նաւ-հանգիստ. որոց 'ի բանդ և 'ի կապանս վաղահաս այցելու, անյուսիցն յոյս, տարակուսելոցն արագահաս օգնական։ Այրանելի ես դու, ով մեծ զօրավարդ Պետրոս, քան զամենայն սուրբս. երանի՛ որոց տեսին դքեզ, երանի՛ որոց ծանեան զքեզ, երանի՛ որոց խօսակիցք եղէն քեզ։ Այրանի՛ քաղաքացն և տեղեացն ընդ որ շրջեցար. երանի՛ և տաճարացն, որ 'ի սուրբ յոսկերաց քոց հանդչին անդ։ Այրանի՛ և քահանայից որ կատարեն զոր մեծի յիշատակի քո. երանի՛ և սրբազան կրօնաւորացն որք սրբութեամբ և անբիծ վարիւք զփրկագործ և զոսկալի պատարագն 'ի տաճարի քում կատարեն։ Այրանի՛ միաբանացն և ժողովրդոցն որ 'ի սեպհական տաճարն քո ապաւինին։ Այրանի՛ այնոցիկ որ զամե-

նայնապանծալի տնա քո կատարեն պահիւք և աղօ-
թիւք և ողջակիզօք, զի նոցա է արքայութիւն երկնից։
Այրանի որոց հեղուն ձէթ 'ի տաճար քո, հեղուն վասն
անուանդ քում, զի նոքա ողորմութիւն գտցեն։

Ո՛վ քաջ նահատակ Գէորգիէ, բարւոք է քաջու-
թիւնդ քո. որպիսի յառաջակայութիւն տուաւ քեզ
յաշխարհի վասն փրկութեան մարդկան։ Որպիսի միջ-
նորդ և բարեխօս առ Աստուած անսամանելի. որպիսի
պատսպարան և պարիսպ ամրութեան յուսացելոցս 'ի
քեզ օգնական և վերածածկոյթ փրկութեան։ Ո՛վ
փառաւոր վկայդ Քրիստոսի սուրբդ Գէորգիէ, արա-
գացիր այժմ 'ի միջի մերում և կատարեա զՀայցուածս
զոր խնդրեմք 'ի քէն, և դու հայցեա 'ի Քրիստոսէ
զթողութիւն մեղաց մերոց։

ՏԱՂ

ՍԲՐՈՑՆ ԳԻՍՈՐԻՍՅ ՀՕՐՄԱՅԵՐԻՆ

ԵՒ

ՆՄԱՆԵԱՑ ԻՒՐՈՑ

Ի ՆԵՐՍԻՍԻ ՏԱՐՍՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Թագաւորն անմահ յաշխարհըս երևեալ
Ցլատել զազգըս մարդկան 'ի բանսարկուէն .
Կերպարանըն հօր առեալ ըզմարդկայինս ,
Ցնօրինաբար մարմնով խաչի համբերելով .
Օ վայրանգեալ բնութիս յարութեամբըն նորոգեալ ,
Դերագոյն վերհազունիցն յաթոռ նըստոյց ։
Թագաւորն փառաց հարեալ ըզպատերազմն
Ելար առեալ բաշխեաց պարգևս որդւոց մարդկան .
Հար կործանեաց զանմարմինն ըզբերիար
Նըշաւակեաց և ետ կոխան զօրաց իւրոց .
Խրախոյս ձայնեաց ընդ տիեզերս որդւոց մարդկան ,
Դաջըս լերուք , իմ զօրականք , ես յաղթեցի ։
Յահեղ ձայնէն սուրբ զինաւորքըն զօրացան
Ճակատ առին և ախոյեան ջարին յարեան .
Օ մկկըրտութիւնն որ 'ի Դրխատոս՝ զրահ ըզգեցան ,
Վահան ամուր ըզյոյսն 'ի ձեր 'ի ձեռս առին ,

Բզաղաւարտն փրրկութեան 'ի գլուխ եղին,
Նոր ըղձանքն կենաց անդ փայլեցուցին։
Բայսու զինեալ նոցա 'ի մարտն դիմեցին,
Նոր յաղթութեան արձան 'ի մէջ երկրի դրին։
Յորոց և մին այսօր մարտեաւ արիապէս
Օրդ ժողովեալ պատուեմք սիրով ներտաղապէս։
Օգէորգէոս բանին կենաց վաստակաւոր,
Որ ետ պըտուղ ըստացողին հարիւրաւոր։
Խորհրդական անուանն եղև արդիւնաւոր,
Դորձեաց զերկիրքս բանաւոր յոյժ հրմնաւոր։
Ի մէջ մրտեալ կռապաշտութեանն խաւարի
Լուսապայծառ աստեղս ծագեաց 'ի յաշխարհի։
Յաքբայական հանդէս Հռոմայ մեծ քաղաքի
Ի մէջ կացեալ վրկայ անուանքն Քրիստոսի։
Հիացեալ յոյժ զքեզ տեսին զլինուորն արի
Մարտեան ընդ նա պէսպէս երկամքեքք վրտանգի։
Լաս 'ի գերումն ըզսուրբն ածին 'ի կախանի,
Մարմնքն զուարթ որպէս ըզվարդ կարմիր ներկեալ
Դղեօրդրդոյն եղև Նրման շքեղազարդեալ
Պայծառացեալ սպիտակափայլ և կարմրացեալ։
Նրման Փրրկչին զկողն տիգին մատուցանէր,
Սուրն ամչեալ յամբիծ յանձնէն յետս ընկրկէր։
Դարձեալ 'ի հուր ողջակիզեալ պատարագէր,
Մնչեցեան 'ի Դաբէլն աստ շինքանէր։
Բայլ և վրկայն 'ի վաստակոցն ոչ նահանջէր,
Որպէս ըզՏէրրն մեր 'ի խաչ կախեալ լինէր,
Դասք հրեշտակաց ակամբ զնովաւ շուրջ պարփակէր,
Զայն 'ի յերկնից ըզնահատակն քաջ պընդէր։
Ի յանիւն ապա ածեալ սուրբքն տանջէր
Հոլովելով սուրբ աղանին վիրաւորէր։
Բայլոր զվրկայն ընդ փորձանացն պլսակէր,
Վաղվաղակի 'ի չար վիրացն բժշկէր։

1 Միւսն քաջասընդէր։ 2 Միւսն Հոլանելովն։

Հիացումն մեծ ըզկուսակաստոն պաշարեր ։
Ի զուբ կրոցն արկեալ զվրկայն տասիկ տանջեր ։
Յանկալին 'ի հրեշտակաց ողջագուրեր ։
Ինտի եղեալ 'ի հանդիսի տեղին դիմեր ։
Վ ըկայ խաչին Վեղրգեոս բարձրը գոչեր ,
Ո՛վ յիմարեալք խաւարտմանք զլոյսըս տեսեք ։
Յաղթեալ նորին բրոնաւորին դէմքն այլայլեր ,
Նա 'ի զրդումն այրն ասպառում երբեք չմիտեր ։
Ասէ 'ի յաւարտ զնահատակին հանդէսն ածեր ,
Նա սրով ըզսուրբ գլուխ գասուինն հատաներ ։
Ընուշահոտ զենմանքն հոտ յերկինս բուրեր ,
Հոտոտելով երկնաւորին կամքն հառներ ։
Ամենորդ զանուն նահատակին մեզ պարգևեր ,
Օ՜ որ կոչելով 'ի յօգնութիւն ասա առաքէ ։
Բարեխօս միշտ տնողաց ըզսա ինորհէ ,
Նա աշխարհի պարգևատու տընօրինէ ։
Ըստուածութեանն 'ի մէնք առիթ փառաստրութեան ,
Որ զօրացոյց զվրկայն , օրհնեալք միշտ յաւիտեան ։

ԳԵՆՁ

ԳԼՈՐԳԵՑ

ԲԱԶՄԱՁԱՐՁԱՐ ՁԻՆԱՒՈՐԻՆ

Աչքունեալ է Հայր ծընող Միածնին,
Գովեալ Որդին լոյսն անքննելին։
Բարեբանեալ Աստուած սուրբ Հոգին
Հօր փառակից հանգոյն Միածնին.
Որ 'ի ստորին ազգէ հողածին
Իւր զօրականս առնէ դէմ չարին.
Որպէս ըզմեծ վրէժ սքանչելին,
Օ գէորգէոս անուն գովելին.
Օ լոյսն պայծառ 'ի յաշտանակին,
Գեղեցկատիպ պատկեր հրաշալին,
Օ քրիստոսազօր նահատակ բարին,
Օ մարտիրոսաց պարծանաց տեղին.
Օ արփին ծագեալ 'ի Գամրաց երկրին,
Լուսաւորիչ հոգւոց մարդկին,
Որ վրէժխնդիր Աստուծոյ Բանին.
Բարեխօսութեամբ սրբոյն Գէորգայ
Գրեթա 'ի մեզ անահիկ ազգաց, աղաչեմք։
Լուր Տէր և ողորմեա։

Ասան յաղթող Հոգւով զօրացեալ
Գէորգէոս վրկայն սքանչացեալ
Ծագաւորաց առաջի կացեալ,
Օ մնոտի պաշտօնս նոցա անարգեալ.
Օ՝որ չար Թունաք բանսարկուին լրցեալ
Դատիանոս տանջանս պատրաստեալ.
Օ Գէորգէոս գրլխ՝իվայր կախեալ,
Օ՝ բոլոր մարմինն քերչաք քերեալ,
Լրկայն բևեռս 'ի յոտսն հարեալ,
Բ.ՍԼ և ըգլուխս սրբոյն սևեռեալ.
Լաւ 'ի բանտի ընկնա արգելեալ,
Ուր Տէր Յիսուս անդէն երևեալ,
Ի հարուածոյն ընկնա փարատեալ,
Օ՝անպատմելի զփառսն խոստացեալ.
Բարեխօսութեամբ սրբոյն Գէորգայ
Դրթա 'ի մեզ անմահից արքայ, աղաչեմք։
Լուր Տէր և ողորմեա։
Բ.ռեալ տարան զվրկայն յատէնի
Ծագաւորաց բազմաց առաջի.
Պ.ընդեալ զմարմինն 'ի մամուլ փայտի,
Մ՝ինչ աւանդեաց զՀոգին բաղձալի.
Բ.ՍԼ հրաշագործ Տէրն ամենայնի
Դարձեալ յարոյց զվրկայն պանծալի.
Լակ մոլորեալքն խաւարեալ ոգի,
Պ.սեն շնորհիւ կրոցն այս լինի։
Բ.ՍԼ բազմագոյն տանջանս սոսկալի
Պ.ՃԷն ըզմարմնով վրկային մեծի.
Լաւ նա մընաց յոյժ անդրդուելի
Որպէս ըզվեմ՝'ի յալեաց ծովի.
Դարձեալ կրկին արկին 'ի բանտի,
Բ.յն որ փրտեալ սիւնն կանգնի.
Ուր և սեղան եդեալ բարելի
Տեառնն հրեշտակք սրբոյն առաջի.
Լաւ զայն տեսեալ մօրն սասղարի,

Որ զտղայն ունէր ինն ամ՛ի գաղտնի ,
Բերեալ ընկէց սրբոյն առաջի ,
Լաւ նա արար ըստ գլնալի .
Յետոյ բերեալ կախարդ մ՛ առաջի ,
Որ Ա.թանաս անուն իւր ասի ,
Օ՛ի չար գործօքն ստանայի
Նա յաղթեացէ Գէորգէսի .
Սուրբն Գէորգ ընդհանր Յիսուսի
Դարձոյց զկախարդն Ա՛ստուած կենդանի .
Յարոյց բազում մարմին մեռելի ,
Գէորգէս արար կենդանի ։
Բարեխօսութեամբ սրբոյն Գէորգայ
Դրեթա՛ի մեզ անմահից աղքայ , աղաչեմք ։

Լ՚ուր Տէր և ողորմեա ։

Հրաշամարտիկ վրկայն պատուական
Յաղթել Հոգւով չարին ստոյնական
Յանձին կրրե զտանջանսն ամենայն ,
Որպէս զոսկի հրով մաքրական .
Լրրեց անգամ կամաւորական
Նա մահացաւ մարմնով չարչարման ,
Դարձեալ յառներ հոգւով տիրական
Ի յօրինակ աւուրն յարութեան .
Օ՚կազմեալ աթոռն այն աղքայական
Նանաչցոյց ըստ ահարոնեան .
Յետ կարծրագոյն և բազում տանջման
Արով կատարեալ էառ ըզվախճան .
Ոչք կատարէն զտնս իւր անխափան
Ա.ղագապէս լինի օգնական .
Որպէս զԳէորգ պատանի տղայն
Դերեալ յազգաց այլասեռական ,
Օ՚ղ ազատեաց սուրբ Գէորգ վրկայն
Յաւուր տանի իւրոյ կատարման ,
Ա՚ սոյն ծնողացն իւր երախտական
Օ՚ղ ունէին առ յաղթող վրկայն ։

Խարեխօսութեամբ սրբոյն Գէորգայ
Գրեթա՛ի մեզ անմահից արքայ, աղաչեմք։
Լուր Տէր և ողորմեա։
Երանելի անուն ըղձալից
Գէորգէոս պարծանք վրկայից.
Պայծառ արև՛ի կամարն երկնից
Գէորգէոս հոգի լուսալից.
Դու մարգարիտ՛ի ցողոյն երկնից
Գէորգէոս լուսատու զարմից.
Սուրբ և մաքուր ընտրեալ՛ի բիւրից
Գէորգէոս բրժիշկ ամենից.
Աչքալինիչ վրշտարար կրրից
Գէորգէոս դիւաց հալածիչ.
Մեծ զինաւոր արքային երկնից,
Գէորգէոս յաղթող կռապաշտից.
Նահատակաց համբրէն սեռից
Գէորգէոս գրլուխ ամենից.
Տօնասիրաց աղգաց համայնից
Գէորգէոս կատարիչ ուխտից.
Ողկոյզ Հրմնեալ՛ի յանհաւատից
Գէորգէոս բաժակ բերկրալից.
Ընտնահաս վրշտաց վրտանգից
Գէորգէոս պատուեալդ՝ի խրմբից։
Յիշեա Տէր և ողորմեա։

Եւ ևս առաւել զյորդորումն սիրոյ և զգործս բարեաց պարգևեալ մեզ խնդրեմք։

Տուր մեզ Տէր Ընտուած մեր։
Օ՛ն ամենեսեան մեր և զմիմեանս Տեառն Ընտուծոյ ամենակալին յանձն արասցուք։
Մեզ Տեառնդ յանձն եղիցուք։
Լրումն օրինաց և ծագող Հնորհաց
Ընտուածային բարձող յանցանաց,
Մարգարէից և Նահապետաց
Դու կատարումն տեսանողաց,

Աշաքելոց, աւետարանչաց,
Մարգարէտաց և հայրապետաց,
Հանդիսաւոր սուրբ քարոզողաց,
Մարտիրոսաց և Ճշմարտաց,
Օրացուցիչ լեր զօրականաց
Աշաքինեաց և նահատակաց,
Միգ և վահան դու յաղթանակաց,
Օրավարաց տրտոց պլսակաց,
Բարեխօսեա առ Ծընեալն Աստուած
Զմեզ աղատել՝ի հրոյն տանջանաց,
Հաղորդ ընդ քոյդ աղերս մաղթանաց
Մուրճն Յովհաննէս կարապետ կենաց,
Նախավրկայն որ զերկինս եբաց,
Նա Լուսաւոր մեր Հայաստանեայց,
Գէորգէոս գերագոյն բաղմաց
Նահատակաց և զօրականաց.
Զմեզ փրկել՝ի յանօրինաց
Նա՝ի դիւացրն չար փորձանաց.
Նընջեցելոցդն հանգիստ կենաց
Ողորմութիւն ընդ աջակողմանց.
Նա խընդրողի գանձիս որ գտրեաց,
Մանակցութիւն ընդ քոյդ սիրոցաց։

Ողորմեաց մեզ Տեր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Տեր ողորմեա, Տեր ողորմեա. լուր Տեր և ողորմեա։

Տ Ե Դ.

ՅԱստուծոյ ընտրեցար դու բարի
Շառաւիղ օրհնութեան պլտղալի,
Ինդ աշխարհս ամենայն գովելի
Սուրբ Գէորգ նահատակըդ բարի։
Ինմարմնոցըն վերնոցըն վերի
Լմաննեցար սուրբ Գէորգ հրաշալի,
Ընդնութեամբդ և վարուքդ 'ի մարմնի
Պրսակեալ արքային համայնի։
Կենարար մեր Փրկիչն Յիսուսի
Պ ըկայեալ սուրբ Գէորգ պանծալի,
Ընդնութեամբդ և վարուքդ 'ի մարմնի
Յաղթեցեր կռապաշտիցն 'ի մարտի։
Ով Գէորգ մեծատուն պատուելի,
Ղարչարեալ կարծրագոյն 'ի յերկրի.
Լբ մեռեալ Ճշմարիտ 'ի մարմնի,
Լբ կըրկին յարուցեալ կենդանի։
Բարեխօս զքեզ ունիմք աշխարհի
Օ ի քեզնով վերք ' մարմնոյս ողջացի.
Զնական ըր ամէն հասակի
Լբ առ քեզ հաւատով դիմողի։
Լն մարդիկք խեղճ ողորմ ու լալի,
Ուրկութեամբ պեղծ ցաւոք էն 'ի լի,
Ի շինէն էն[2] վարած 'ի հեռի,
Մշնացեալ խեղճ ողորմ ու լալի։

1 Յորինակին ԷՆՈՒԷՐԷ։ 2 Յորինակին 'Ի ԸՆՆ ԷՆ։

Պատկերաք էն գարշեալ աղտեղի ,
Որ մարդկան տեսութեան կարօտի ,
Դու բըժիշկ ես Ճարտար և ձըրի ,
Բայց արա որ շուտով ողջասցի ։
Ի խընդրել զգեղ վիրաց և ցաւի
ԻնչպատՃառ պարգևեա փութալի ։
Բմենայն ցեղ ազգի որ լինի ,
Մանաւանդ մեր ազգիս Բրամի ։
Սուրբ Գէորգ մեծ վրկայ հրաշալի
Նա ընծայ հըրՃուարար Յիսուսի ,
Ողջախոհ դու նըման տատրակի
Վրաք արծիւ և մաքուր աղաւնի ։
Կենդանի սուրբ վրկայ Քրիստոսի
Բռ 'ի մէնք միշտ և ծունըր կըրկնի
Յերկրայնոցս երկնայինդ հրեշտակի ,
ԻնչաՃառ անարծաթ բըժըշկի ։
Ուրախ լեր սուրբ Գէորգ մեծաազգի
Նա ցընծա ընդ մանկանց Արոնի ,
Խընդացո զմեզ յաւուր քո տօնի
Բուժելով զախտ հոգւոյ և զանարմնի ։
Պարգևեա ձիր հնարհայ ամենի
Պարագլուխդ զօրաց հանայնի ։
Դու լեր մեզ ամենոցս հովանի
Օքեզ յուսով յօգնութիւն կոչողի ։
Ողորմեա տօնողացս քո տօնի
Պահպանեա 'ի դիւացըն վրշտաց
Օրացո զմեզ հոգւով 'ի մարմնի
Փառատրել զՀայր Որդւով ընդ Հոգի ։
Աղաղատ և տրգէտ երգողի
Կիտարեանց սուտանուն Յակոբի ,
Մովսէսի այս բանիս խընդրողի ,
Հաւատար ասացէք ողորմի ։

ԳԵՆԶ

ԳԻՆՈՐԴԵՍՅ ՕՁՈՐԱՎԱՐԻՆ

Խընդահրաւէր մանկունք Սիոնի,
Զեզ աւետիս ձայնիւ բերկրալի.
Օրհնեալ 'ի փառս Հօրն երկնաւորի
Եւ էակից Որդւոյն միածնի.
Օձեզ նորոգէ Պսուած սուրբ Հոգին,
Կազմէ տաճար և տուն հանդիստի։
Օ Գէորգէս յիշեմ գովելի,
Որ աստ 'ի տնս իւր եկաւորի.
Օ այն մարտական վրկայն պանծալի.
Բղեագն և զսակն 'ի մէջ հանդիսի.
Բարեխօսութեամբ սրբոյն Գէորգի
Բզմերս ընկալցիս պատարագ բանի, աղաչեմք։
Լուր Տէր և ողորմեա։
Բրմատ կենաց զարմ 'ի յաղատաց
Գէորգէս յաղթողն 'ի Դատրաց,
Բհեղ զօրեղ 'ի յընթշամարտաց,
Բռիծաձև 'ի պարբս բազմաց,
Հրակայաձև 'ի մենամարտաց,
Բհագնատես 'ի զօրականաց,

Գէորգէոս տեսլեամբ հրեշտակաց,
Ինքըզդուէլի հաւատ գերազանց։
Կացեալ յատեան մնոտի իշխանաց
Պատասխանի առնէր ներհակաց,
Ինարգելով զպաշտօնն դիւաց
Եւ քարոզեր զՄ.ստուածն բարձանց։
Բարեխօսութեամբ սրբոյն Գէորգի
Զմերս ընկալցիս պատարագ բանի, աղաչեմք։
Լուր Տէր և ողորմեա։
Զար անօրէն իշխանն ուրացեալ
Լախ ըզգաւառն հարցաքննեալ,
Ելս զանուն սրբոյն ծանուցեալ,
Եւ ըզհաւատ նորա գիտացեալ,
Ըզփախչստեան պատճառն իմացեալ,
Եւ ընդ կըրկին գալն զարմացեալ,
Օ՛ի ըզնոցա ուխտն էր քամահեալ,
Եւ ի Տրիստոս Մ.ստուած զօրացեալ,
Ի տեսարանն պատասխանեալ,
Եւ զԹէատրոնն զարմացուցեալ.
Երկնաւորին եմ ես նըվիրեալ,
Հանմահական յոյսն ապաւինեալ։
Բարեխօսութեամբ սրբոյն Գէորգի
Զմերս ընկալցիս պատարագ բանի, աղաչեմք։
Լուր Տէր և ողորմեա։
Մ.տենական դատիչք և դահիճք
Տանջանական չարին բորբոքիչք,
Մի գազանացն բեկացուցիչք,
Վիհ չարադոյն և սոսկացուցիչք,
Թագաւորին կամաց կատարիչք,
Եւ բարկութեանն զայրացուցիչք.
Ըզչար կապանն ողորմամբ պընդիչք,
Լապա ըզսուրն փայլեցուցիչք,
Օ՛հնարս անուոյն դողացուցիչք,
Օ՛տանջանարանն զանազանիչ.

Մամլոց փայտից պողոսկապրնդիչ
Կախեալ քերումն դառնացուցիչ ։
Բարեխօսութեամբ սրբոյն Գէորգի
Զմերս ընկալցիս պատարագ բանի , աղաչեմք ։
Լուր Տէր և ողորմեա ։
Տեսէք զբարի մշակ նահատակն
Զկորովակն արի յաջողակ ,
Անսիրտելի և անխոտորնակ ,
Բազկատարած յաղօթս ամրափակ ,
Որ անդադար սաղմոսերգութեամբ
Տէրն ըզքահանայ Տեառնըն պաշտօնակ ։
Տէր օգնական է իմ և պարփակ
Իւր հրեշտակօքն որ շուրջ էն բանակ ,
Նա ոչ երկեայց 'ի քէն չար մշակ ,
Որ միշտ նեղհակ ես և հակառակ ,
Ինձ Աստուծոյ լեցի փոխանակ
Պարձատրութիւն և պրսակ ։
Բարեխօսութեամբ սրբոյն Գէորգի
Զմերս ընկալցիս պատարագ բանի , աղաչեմք ։
Լուր Տէր և ողորմեա ։
Ուրախացաւ յաղթողն 'ի մարտին
Գէորգէոս անուն գովելին ,
Օ լինքըն կրնքէր նըշանաւ խաչին ,
Յոգին կուէր զԱրդին միածին .
Ընդէր հեղգայք , ասէր իւխանին ,
Կատարեցէք ըզկամըս չարին .
Օ իս հասուցէք յառագաստ վերին ,
Ուր էն վրկայք անարատ գառինն .
Պաճառական եմ այն մարգարտին ,
Զոր Տէրն ասաց յաւետարանին .
Զարաւեցայ որպէս զեղջերուին
Յամպել յաղբէրն յանապառելին .
Կարօտացայ վերնական լուսին
Թէ՞նմ որ աթոռ է կենարարին ։

Բարեխօսութեամբ սրբոյն Գէորգի
Զմերս ընկալցիս պատարագ քանի, աղաչեմք։
Լուր Տէր և ողորմեա։
Խիստմամբ յաղերս առ քեզ պաղատիմք,
Օգնեալ զինուորդ բարի նահատակ,
Մեզ օգնական սուրբ Գէորգէոս,
Հանգիստ յուսոյ իակ և պահպանակ,
Որ մարմնական վիրաց փոխանակ
Զբեր զանազան կեանսն գերունական.
Փոխան հոսման քո արեան վրտակ
Օպայծառ հանդերձն զանապական.
Փոխան բանտից և չար կապանաց
Օերանականսն հանգըստարան.
Ով սուրբ Գէորգ զօրեղ զօրական
Յոտ տօնողացս արագ օգնական։
Յիշեա Տէր և ողորմեա։
Նաև առաւել զյորդորումն սիրոյ և զգործս բարեաց պարգևել մեզ խնդրեմք։
Տուր մեզ Տէր Պաստուած մեր։
Օանձինս մեր և զմիմեանս Տեառն Պաստուծոյ ամենակալին յանձն արասցուք։
Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։
Բամեալ շաւիղ ծառայն ցանկալի,
Պարտուց վրէժար նահատակն Գէայի,
Զմեհօրհնեալ ծնող Յիսուսի,
Պայր կենսատուին կոյս երանելի,
Հրեղէն զօրացն եղեր ցանկալի,
Սադայելեանցըն զարհուրելի,
Քերովբէիցն եղեր սարսելի,
Սերովբէիցըն պատկառելի.
Բոյսոր 'ի տօն մեծի զինուորի
Գէորգէի քաջ նահատակի,
Կըցորդութեամբ սորին վրկայի,
Պատիր յաղերս Որդւոյն միածնի

Ըզմեզ պահել անփոփոխ յաչխարհի
Հարքայութեանն առնել արժանի։

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա, Տէր ողորմեա. լուր Տէր և ողորմեա։

ՏԷՂ, ԳԻՇՈՐԳԵԱՅ

Բամեալ ըզկիրըս տանջանաց
Օ երկունս հանուրըդ քո վշտաց
Դէորգէոս յանձին տարաւ
Որպէս ըզվէմ անգիծ գրտաւ ։
Օ խաչ քո և զլուծ քո բարձեալ
Ստոր ծանրագոյն վիմաց պարզեալ ։
Դամրաց առ Կայսր ուռ տարածեալ
Օ մայրսըն ծածկեալ յորթոյն ծաղկեալ ։
Վրաջ բարուանակ Հօր քո սրբեալ
Դէորգէոս քեզ մշակեալ,
Սրբոջ յատեալ և կոչոՀեալ,
Բազում վրկայս պըտղաբերեալ ։
Լոր և Հոգւոյ քո բնակարան
Յայտնեալ գործովքըն հրաշաղան ։
Ի տանջանաց միշտ նորոգէր ,
Օ վէրքս բազմաց ապաքինէր ։
Դէորգէոս ընդ քեզ յատնէր ,
Լաւ ըզմեռեալն յարուցանէր ։
Հոգւովն 'ի փորձ ոչ յաղթելով,
Մարմնովն 'ի կրից ոչ պատրելով ։
Ռերեալ զպատկեր քո յարութեան
Որ հաղորդեաց Տէր քո մահուան ,
Դէորգէոս մեծ քո վրկայն ,
Տուր մեզ նովաւ ձիր քաւութեան ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՍՏԱԾԱՇՆՉԱՅ